1023
L. II. 6

ԳԻՐՔ Լ



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 1 ՅՈՒՆՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԲԵՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՍ, 7
1909

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մուրայան (պատկեր) .

Հայերը Ռուսիայում. Մ. Բ. . . . 3

Պատկեր. բանաստեղծ. Մուրացան. . . 12

Քաղցածներ. Բօֆֆor. 14

*** Բանաստեղծ. Յար. Պեsrոսեանց. . 37

Պօլեարնի. I Առաջ. II կեանքի հէքիաթ. թարգմ. Ներ. Ն. Աղանեանց. 38

Ղոշա-վանք. Ասրպեs. 41

Անի քաղաքի աւերակները. Կ. Լէօնտիեվի. Վ. Բ. 50

Մուրացան. Հ. Հ. Հ. 57

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Իւրիյ Վեսելովսկի. Ժամանակակից Հայկական պօէզիայի մի քանի եղանակներ . . 62

ԱՄՍՕՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վեհ. Մ. Իզմիրլեան։—Սիցիլիայի աղէտը։—Յօբելեանները։—Լուրեր։—Խմբագրութեան ծանուցումներ։ 70

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

2000—4000 руб. побочнаго годового дохода для каждаго!!!

Золотая медаль Парижъ 1905 г.

Кто за 300—600 руб. (допускается разсрочка платежа) пріобрѣтаетъ у насъ машину съ ея рецептами указаніями и т. п. для устройства завода по выдѣлкѣ: фруктовыхъ, ягодныхъ, шипучихъ, сельтерскихъ и т. п. искуственныхъ минеральныхъ водъ, лимонадъ-газесъ, разныхъ квасовъ, меду и французскихъ фантастическо-прохладительно-игристыхъ напитковъ и винъ (сидръ, шербетъ, шампанъ и т.п.)

Подробности **безплатно**. Смѣты и богато иллюстрированные прейсъ-куранты высылаетъ только за 15 шт. 7 коп. почтовыхъ марокъ. **Фабрика машинъ ИППО И К° Варшава, Грибная ул. соб. д. № 15.**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

«ԼՈՒՄԱՅԻ» այն համարը ուղարկւում է մեր նախկին բաժանորդներից բոլորին։ Ցանկացողները ստանալ 1909 թ., թող բարեհաճեն անմիջապէս նորոգել բաժնէգրութիւնը, որպէսզի խմբագրութիւնը կարող լինի անհրաժեշտ կարգադրութիւններ անել։

Այն բաժանորդներին, որոնք ՉԵՆ ՎԵՐԱՆՈՐՈԳԻ իրենց բաժնէգրութիւնը, խմբագրութիւնը ստիպուած կլինի դադարեցնել «ԼՈՒՄԱՅԻ» առաքումը։

Որովհետև «ՀԱՅՐԵՆԻՔ» թերթը խմբագրութիւնից անկախ պատճառներով ժամանակաւորապէս դադարում է, 1909 թուին գրուող «ՀԱՅՐԵՆԻՔԻ» բոլոր բաժանորդներին կուղարկուի «ԼՈՒՄԱՅ» ամսագիրը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ։

ԳԻՐՔ Ե



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 1 ՅՈՒՆՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ

ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՊՕԼԻՑ. 7·

1909





ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ

Ա.

Սովորաբար Ռուսսիայի պատմութիւնը սկսում են 862 թուից, երբ Սլավոնների մի քանի ցեղեր միանում են Վարեագ իշխանների կառավարութեան ներքոյ։ Վերոյիշեալ թուին ռուս-սլավոններին մենք հանդիպում ենք Նովգորոդի շուրջը, մինչդեռ դրանից առաջ նրանք բնակուելիս են եղել այժմեան Կիևի և Կրակովի մէջտեղ գտնուած երկրում։

Առաջին իշխաններին—դար ու կիսուայ ընթացքում—յաջողւում է նուաճել շրջակայ ուրիշ սլավոն ցեղերին էլ ու մայրաքաղաքը դէպի հարաւ՝ Կիև տեղափոխել։ Այդ քաղաքը գտնւում էր Բիւզանդիոն տանող ճանապարհի վերայ, իսկ Բիւզանդիոնը Վարեագ իշխանների համար նոյնչափ հրապոյր ունէր, որչափ Հռովմը միջնադարեան բարբարոս ցեղերի իշխանների համար։ Բիւզանդիոնը դառնում է նրանց արշաւանքների կէտ—նպատակը։ Դնեպր գետով նրանք իջնում էին Սև ծով և ապա Բալկանեան թերակղզու մօտով լողում էին դէպի Բիւզանդիոն։ Այսպէս չուեց 907 թ. Օլէգը, նրանից յետոյ Իգորը, Սվեատոսլավը, Օլգան, Վլադիմիրը։ Վերջինս 988 թուին բիւզանդացիների միջոցով քրիստոնէութիւն է ընդունում, հռչակաւոր մայրաքաղաքի հետ առևտրական կապեր է հաստատում, և, իր նախորդների գործը շարունակելով, ու նրանց գերազանցելով՝ ամրացնում է Բիւզանդիայի

հետ Ռուսսիայի ունեցած կուլտուրական կապերը։ Իր այդ արշաւանքների ժամանակ նա նուաճում է Ղրիմ թերակղզու Կորսուն քաղաքը և առ հասարակ լայնացնում է Ռուսսիայի սահմանները դէպի հարաւ և արևելք։

Չնայած ներքին երկպառակութիւնների՝ Ռուսսիայի սահմանները տարեց տարի մեծանում էին, այնպէս որ XIII դդ դարում, Թաթարների արշաւանքների ժամանակ, Ռուսսիան, արդէն մի լայնատարած երկիր էր ներկայացնում, որը արևմտքից շրջապատուած էր Էստէրով, Լիվերով, Լեհացիներով և ուրիշ սլավոն ազգերով. հիւսիսից—Ֆիններով ու Կասէլներով. հարաւում՝ Պոլովցիների նման թափառական ցեղեր, իսկ արևելքում Իթիլ (Վոլգա) գետի ափերով բնակւում էին բազմաթիւ մանր ազգութիւններ՝ Մորդվացիներ, Բուլղարներ, Ղազարներ և այլն։ Այս կողմերում յետոյ հաստատուեց Թաթարական Ոսկէ խանութիւնը։

Բ.

Մինչ այդ կողմերում ծագում էր Ռուսների աստղը՝ այնտեղ, փոքր Ասիայի խորքերում, մի բուռն Հայեր բոլորում էին իրանց պատմական կեանքի նշանաւոր Բագրատունեաց շրջանը, կուլտուրապէս և քաղաքականապէս զարգացած ժողովուրդ ներկայացնելով։ Դարերի ընթացքում նրանք շփուել էին դրացի և հեռաւոր բազմաթիւ ազգերի հետ, վաճառականական կապեր էին հաստատել, ենթարկուել էին օտարների ազդեցութեանը և իրանք էլ ազդել էին ուրիշների վերայ։

Պէս-պէս արհաւիրքները, քաղաքական և կրօնական երկպառակութիւնները, այլ և այլ վաճառականական և կուլտուրական շահերը ստիպել էին Հայերին շատ վաղ թողնել իրանց—շատ անգամ անհիւրընկալ—հայրենիքը և օտարութեան մէջ բաղտ որոնել։

Հայերը երբէք կղզիացած չեն ապրել, ուստի հա-

ւանական է, որ նրանք շփուած լինեն Ռուս ժողովրդի հետ վերջնիս ինքնուրոյն և պատմական կեանքի հէնց առաջին քայլափոխին. բայց մենք չենք կարող մինչև իսկ մօտաւորապէս որոշել թէ ե՞րբ է (ո՞ր դարում) տեղի ունեցել այդ առաջին շփումը, երկու ազգերի հանդիպումը։ Պէտք է ենթադրել, որ նախ և առաջ Ռուսսիայի վրայով անցել են հայ վաճառականները, երթևեկելով Արևելքից—Արևմուտք, միջնորդ հանդիսանալով Եւրոպացի 1) և Ասիացի վաճառականների միջև։ Առևտրական այդ ճանապարհը պէտք է անցնելիս լինէր այժմեան Հարաւային Ռուսսիայով, մօտաւորապէս հետևեալ ուղիով՝ այժմեան Ունգարիայի կողմերից, ցամաքով, Պոլովցիների (նախկին սկիւթացւոց) դաշտավայրով մինչև այժմեան Ազով (նախկին Ազակ) ծովը, յետոյ Դոն (նախկին Թանայիս) գետով մինչև Վոլգա (նախկին Իթիլ) գետը։ Արևմտեան Եւրոպայի նոյն կողմերից կարելի էր գալ և ջրով Դունայով կամ հիւսիսային Դնէստրով իջնել Սև ծով. այստեղից կարելի է երթալ Բիւզանդիոն, Տրապիզոն և կամ մտնել Ազակ ծովը ու Դոնի վրայով էլի հասնել Իթիլ գետին։ 2)

Ղրիմի հարաւային ափերը այս առևտրական երթևեկութիւնների հանդստի վայրերն են եղել։

Իթիլ գետով վաճառականները բարձրանում էին հիւսիս, դէպի Բոլղարական հարուստ թագաւորութիւնը. կամ իջնում էին մինչև այժմեան Արտրիա քաղաքը, որը Իթիլ էր կոչվում և որի Խազարան կոչուած մասում արևելեան և արևմտեան վաճառականները իրանց պահեստները ունէին։ Շատ անգամ վաճառականական նաւերը մտել են Կասպից ծովը, հասել են նրա հարաւային ափե-

---

1) Այսպէս է Соловьевъ-ի, Карамзинъ-ի, Костомаровъ-ի և այլ ռուս պատմաբանների կարծիքը։ Տես նաև Исторія Армянскаго Народа С. Глинка. м. 1833 г. часть I II, Գ. Բանանեանի ճեմարանական ճառը, Դր. Զանշեանի յօդուածը հայլն։

2) А. Субботинъ, Къ вопросу о торговыхъ сношеніяхъ Россіи съ Востокомъ, Вѣстникъ воспитанія № 6, 1906 г.

ին, և Անդրկովկասեան ու Փոքրասիական ազգերի հետ առևտուր են ունեցել։

Արևելեան և արևմտեան ազգերի այս յարաբերութիւնների ժամանակ անտարակոյս վերջին դերը չեն կատարել հայերը, որոնք ի վաղուց հետէ առևտուր են ունեցել Պարսկաստանի, Հնդկաստանի և դուցէ Չինաստանի հետ։ Եւրոպացի վաճառականների համար նրանք պէտքէ լաւ միջնորդներ և մատակարարողներ լինէին, մասնաւորապէս Կասպից ծովի կողմերում։

Գ.

Հայերը կարող էին Ռուսսիա մտնել հարաւից, Արևելքից, մասամբ էլ Արևմտքից, եթէ նախօրօք գտնւում էին Եւրոպական երկրներում։ Հարաւային կողմից Ռուսսիա մտնելուց առաջ Հայերը պէտք է որ նախ ծանօթանային Սև ծովի Փոքր Ասիական և Կովկասեան ափերի հետ, մտնէին Սև ծովը, անցնէին Ղրիմու թերակղզու կողմերը։ Այդ գործը հայերը կատարել էին դեռ Յոյների և Հռովմէացիների տիրապետութեան ժամանակ, առևտրական կապեր հաստատելով ոչ միայն Աթէնքի և Հռովմի հետ, այլև Փոքր Ասիայի ծովեզրեայ գաղութների հետ։ Մասնակցելով Յունական և Հռովմէական նուաճողական պատերազմներին—Հայերը անշուշտ լաւ ուսումնասիրած կլինէին ամբողջ Սև ծովը և նրա բոլոր երեք ափերը։ Դուցէ այդ ժամանակներում այդ վայրերում առաջին հայ գաղթականութիւններն էլ են հաստատուել։ Աւելի քան հաւանական է, որ արդէն I դարում Ք. ա. հայերը երևացին Ղրիմում, երբ Հայոց թագաւորի փեսայ Միհրդատը հաստատուեց այդ կողմերում, իբրև Ոսփորեան թագաւոր։ I Անտոնեան կայսրը Ոսփորը Հայաստանի հետ միասին տալիս է Պոլէմոնին. իսկ սրա որդին Զէնինը ժառանգութիւն է ստանում միայն Հայաստանը։ Բայց Հայաստանի թագաւոր կոչուելով հանդերձ նրանք շարու-

նակում էին ապրել Ղրիմում և հաւանական է, որ Հայերը այդ միջոցին քաղաքական և առևտրական յարաբերութիւններ հաստատէին հռչակաւոր Ոսփորեան թագաւորութեան զանազան վաճառական վայրերի հետ։ 1)

Սև ծովի Բալկանեան ափերի հետ հայերը ծանօթացան նոյնպէս շատ վաղ, յամենայն դէպս Անիի առաջին աւերումից (XI դ.) շատ առաջ։ Յայտնի Հայագէտ Պ. Ն. Մառը կարծում է, որ Քաղկեդոնի ժողովից յետոյ հայերի մէջ երկու մեծ կուսակցութիւն է կազմուել՝ Քաղկեդոնականների և Հակաքաղկեդոնականների և որ վերջինները, որպէս ազգային ուղղութեան ներկայացուցիչներ, յաղթող են հանդիսացել ընդհանուր պայքարում։ Քաղկեդոնականներն էլ, քաղաքականապէս յաղթուած, գուցէ և հալածուած, ստիպուած են եղել սակաւ առ սակաւ գաղթել դէպի այն երկիրները, ուր ապրում էին նրանց դաւանակից ազգերը՝ Վրացիները և Բիւզանդացիները։ 2) Պէտք է կարծել, որ Բիւզանդական Հայազգի զօրավարների, նախարարների, վերջապէս կայսրների (մասնաւորապէս ամբողջ Մակեդոնեան կոչուած կայսերական տոհմը) մեծ մասը այս Հայաստանից գաղթած ուղղափառ հայերից են դուրս եկել։ Բայց Բիւզանդական կայսրութեան լայնածաւալ սահմաններում ուրիշ շատ հայեր էլ կային, որոնց մի մասը Բիւզանդիոն էր գաղթել քաղաքական հանգամանքներից ստիպուած 3), մի մասը վարձկան զինուորներ էին, մի մասը—վաճառականներ, որոնք ապրում էին գրեթէ բոլոր ծովեզրեայ մեծ քաղաքներում. չմոռանանք

---

1) *Станиславъ Сестренцевичъ Богушъ*, Исторія Царства Херсонск Таврическаго I и II т. 1806 г.

В. Х. Кондараки Въ память столѣтія Крыма, М. 1883 г. т. т. 1—10.

2) *Марръ* Н. Аркаунъ, монгольское названіе христіанъ, въ связи съ опросомъ об армянахъ Халкедонидахъ. Византійскій Временникъ № XII, 1906 г.

3) *Մ. Ախոռեան*-ի անպիտան գրքոյկի մէջ, չգիտեմ ինչ աղբիւրների հիման վրայ, յիշւում է, իբր թէ VIII-դ, Շապուհ Ամատունին, նեղուելով Արաբներից, թողնում է հայրենիքը և 12,000 հայերով գաղթում է Բիւզանդիոն. իսկ այնտեղից հետևեալ երկու դարերի ընթացքում դրանց սերունդը գաղթում է դէպի Իտալիա, Ունգարիա, Լեհաստան, Ռուսիա և Ղրիմ...

յիշել նաև Պաւլիկեան աղանդաւորների գաղութը, որ բռնի կերպով բնակեցրած էր Բիւզանդիայի և Բոլղարական թագաւորութեան սահմանագլխում (IX-րդ դարում)։

Հայերի վարկը և նշանակութիւնը Բիւզանդական կայսրութեան մէջ շատ մեծ էր. արդէն VI-րդ դարուց սկսուած Բիւզանդական կայսերական գահի վերայ մենք բազմած ենք տեսնում քաջարի Հայ զօրապետներին։ 1) 708 թուին հայ աքսորական զօրավարի առաջնորդութեամբ ապստամբում է Քերսոնէ քաղաքը և Յուստիանոսին ջարդելուց յետոյ նրան կայսր է հրատարակում։ Այդ Վարդան զօրավարը Փիլիպպէոս անունով թագաւորում է Բիւզանդիոնում 711 թուից մինչև 713 ը 2)։ Մի ուրիշ Վարդան, հարիւր տարի անցնելուց յետոյ, նոյնպէս ապստամբում է, բայց սնյաջող. նրա սկսած գործը շարունակում են նրա ընկերները, որոնցից Միքայէլին (Հայազգի) կրկին յաջողւում է գահ բարձրանալ։ Լէօն V-ը (813-820) նոյնպէս հայ էր։ Վերջապէս Բազիլիոս I ը (Բարսեղ) 876 թուին սկիզբն է դնում Հայկազեան տոհմի գահակալութեան, որը գրեթէ 200 տարի է տևում։ Մակեդոնիայից եկած լինելով այդ տոհմը Մակեդոնեան կոչուեց3)։

Հայազգի կայսրները չէին ծածկում իրանց հայ լինելը (մինչև իսկ աշխատում էին ապացուցանել, որ իրանք Արշակունեաց տոհմից են). շատ անգամ ամուսնանում էին հայազգի զօրավարների և պալատականների աղջիկների վերայ։

---

1) Այդ մասին յիշատակում են հայ և բիւզանդական պատմաբանները. տես Собраніе Актовъ, относящихся къ обозрѣнію исторіи армянскаго народа I, II и III част. М., 1836—1838.

2) Նիկիփորոսի մօտ ասուած է՝ Berdunem guemnam armenum exuem jmperatorem salutant... տես նոյնպէս Кеннеѣ, О древностяхъ южнаго берега Крыма, С. П. Б. 1837, եւ. Հ. Մ. Բժշկեանց՝ ճանապարհորդութիւն ի Լեհաստան 1830, Վենետիկ.

3) Հայազգի կայսրների մասին տես Գելցեր-ի բիւզանդական կայսրների պատմութիւնը. նոյնպէս բիւզանդագէտ А. Васиѣевъ-ի Византія и Арабы ուսումնասիրութիւնը, երկհատոր։ Մանաւորապէս Մակեդոնական տոհմի մասին նա յօդուած ունի Византійскій Времменникъ ժողովածուի XII հատորում (1906)։

Հայ տարրը այդ ժամանակուայ բիւզանդական կեանքի բոլոր ասպարէզներում նշանաւոր դեր էր խաղում. մասնաւորապէս զօրքի մէջ, ուր ոչ միայն Հայ սպաներ ու հրամանատարներ կային, այլ և ամբողջ գնդեր հայ զինուորներից բաղկացած։

Դ.

Ահա այս չեզոք—բիւզանդական հողի վերայ տեղի է ունենում Հայերի և Ռուսների միջև առաջին շփումը, որի մասին մենք ունենք արդէն պատմական, գրաւոր տեղեկութիւններ։ Ռուս իշխանները իրանց զօրագնդերով ընդհարւում էին Քէրսոնացիների, Բուլղարների1), Բիւզանդացիների հետ. մտնում էին նրանց սահմանները, դաշն էին կապում հայն. նրանք կարող չէին գործ չունենալ Բիւզանդացի Հայազգի կայսրների, պալատականների, զօրավարների և նոյնիսկ զինուորների հետ։ Հայկազեան տոհմի տիրապետութեան օրով, երբ Բիւզանդական պալատում բազմաթիւ հայ բարձրաստիճան պաշտօնեաներ կային—Թիկնապահների թւում յիշւում են նաև ռուսները։

Այսպէս 946 թուի մի պալատական ընդունելութեան ժամանակ պալատում եղել են բազմաթիւ քրիստոնէութիւն ընդունած ռուսներ՝ զինուած սրերով և ձեռներին դրօշակ։ 2)

Այստեղ շփուելուց և միմեանց ծանօթանալուց յետոյ —հայ և ռուս զինուորները միասին, մի դրօշի տակ, պատերազմում են բիւզանդական զօրքերում և նաւատորմղում, ընդդէմ արտաքին թշնամիների, իհարկէ գլխաւորապէս ընդդէմ Արաբների։ Իմերոս զօրավարի արշաւանքի ժամանակ (910 թ.) նրա զօրագնդի մէջ բացի Թրաքիացիների, Մակեդոնացիների և այլոց կային նաև հայերը

1) Քորսուն կամ Խերսոնիս Ղրիմու ծովափնեայ քաղաք էր։ Այստեղ խօսքը Բալկանեան բուլղարների մասին է։

2) Տես Карамзинъ Исторія Государства Россійскаго т. I, прим. 384.

և 700 հոգի ռուսներ. վերջիններս երևի օգնութեան էին եկել Բիւզանդացիներին Օլէգի հետ կապուած պայմանագրի (907 թ) հիման վերայ։ Հայ զինուորների թիւը 2000 էր՝ Սեբաստիայից 1000 ձիաւոր, Պլուտանիայից — 500 և Պրինէից — 500. Կոնստանդինոս Բերփերուժանը հաղորդում է նաև թէ քանի էին ստանում օրական հայ ձիաւորները։ 1) 949 թուի Կրէտական արշաւանքի ժամանակ ևս Բիւզանդական զօրքի և նաւատորմղի մէջ յիշւում են ի միջի այլ ազգերի ռուսները (600 հոգի) 2) և հայերը (Անատոլուց—1000 հոգի, թրաքեսիական թէմից—փոխադրուելու համար պատրաստի նաւեր չլինելու պատճառով—փոխանակ 600-ի, միայն—50 հոգի 3)։ Սիկիլիայի դէմ մղուած պատերազմի ժամանակ էլ (964 թ.) Բիւզանդական զօրքի մէջ գտնւում էին բացի յոյներից, նաև պարսիկներ, ռուսներ, հայեր։

Յայտնի է, որ ռուսաց Օլգա իշխանուհին Բիւզանդիոնում քրիստոնէութիւն է ընդունում, իսկ նրա թոռը՝ Վլադիմիրը, նոյնպէս Բիւզանդացիների ազդեցութեան տակ քրիստոնէութիւն ընդունելով—988 թուին բոնի կերպով քրիստոնէութեան գիրկն է դարձնում նաև իր հպատակ ռուս ժողովուրդը։ Այդ իշխանը ամուսնացել էր հայազգի Ռոմանոս II կայսեր Աննա աղջկայ հետ, որը Ռուսսիա գնալով հաւանօրէն տարած լինի իր հետ իր պալատական կանանց և սեփական թիկնապահներին. չպէտք է մոռանալ, որ նա հարս էր փնում բարբարոս երկիր։ Ահա այդ շքախմբի և պալատականների մէջ է հարկաւոր որոնել այն հայերին, որոնք առաջին անգամ եկան Ռուսսիա և սկսեցին ծառայել ռուս արքունիքում։

---

1) Տես *А. А. Васильевъ*, Византія и Арабы (867—959) С. П. Б. 1902. Բիւզանդական կայսրները ըստ երևոյթին զաղթեցնում էին երկրի սահմանագլուխները և նրանց յանձնում սահմանի պաշտպանութիւնը թշնամիների յարձակումներից, այսինքն հայերը անում էին նոյնը, ինչոր զաղթականները Ռուսիայում։

2) *Карамзинъ*—ibid.

3) *Васняевъ*—ibid.

Սա միակ դէպքը չէ, որ ռուս իշխանները խնամէական կապեր են հաստատում Բիւզանդիոնի Հայազգի կայսրների հետ. այսպէս Վսէվոլոդ ռուս իշխանը ամուսնանում է Կոնստանդին Մոնոմախոսի աղջկայ հետ, որոնց որդին էր հռչակաւոր ռուս իշխան Վլադիմիր Մոնոմախոսը (1113—1125 թ)։ 1)

Քաղաքական յարաբերութիւնների հետ զուգընթացաբար գնում էին առևտրական յարաբերութիւնները։ Պոլիսը այդ միջոցին առևտրական յարաբերութիւնների կենդրոն էր և գրաւում էր ոչ միայն Հայերին, այլ և ամենահեռաւոր ազգերին։ X դարում ռուս վաճառականները՝ Նովգորոդից, Սմոլէնսկից, Չէրնիգովից և այլն արդէն ունէին Պոլսում իրանց քարվանսարան և կենդանի առևտրական յարաբերութիւնների մէջ էին տեղացի և եկուոր վաճառականների հետ։ 2)

Ռուսների և Բիւզանդացիների մէջ X-րդ դարուց սկըսած շարունակւում են անընդհատ յարաբերութիւններ, ուստի ռուսները բազմաթիւ առիթներ ունէին ի մօտոյ ծանօթանալ կայսրութեան մէջ առաջնակարգ դիրք ունեցող Հայ տարրի հետ, Հայերի բնաւորութեան վարչական, պատերազմական և առևտրական ընդունակութիւններին, առևտրական աչքբացութեան, գուցէ և դաւանանքի հետ, եթէ ենթադրենք, որ Բիւզանդիոնում բացի քաղկեդոնիկ Հայերից-կային Հայաստանեայց եկեղեցու զաւակներ ևս։

Մ. Բ.

(կը շարունակուի)

---

1) Տես այդ մասին և առհասարակ բիւզանդական յարաբերութիւնների մասին Ф. Тарновскій Изученіе Византійской исторіи и ея тенденціозное приложеніе въ древнемъ Руси. Кіевъ 1876.

2) А. Бэръ. Исторія Всемірной Торговли, пер. Циммермана, 1876 г. стр. 148.

ՊԱՏԿԵՐ

I

Դեռ մութ գիշեր, երկրի վրայ
Փռած ունէր իւր թևեր,
Դեռ մարդկային սիրտն անդգայ
Քնոյ գիրկը կը թմրէր.
Մեռած ասես ամբողջ բնութիւն,
Ոչ աղաղակ, ոչ շշուկ.
Կարծես հատած է մահուան քուն
Ամենուն էլ ձայն ու շունչ,
Չի երևում ոչ նուազ լոյս
Ոչ աստեղաց փայլ ու շող
Իմ էլ կարծես հանգչում է յոյս
Արև տեսնել ոսկեշող։

II

Տխուր գիշեր, և արթնութեան
Ո՜վ ատելի արարած.
Քո մէջ ճիշտ որ Հայի կենաց
Պատկերն ունիս նկարած,
Նրա անշարժ, անշունչ մարմին
Դրուած կարծես դագաղում,
Նրա անհոգ, թմրած հոգին,
Որ չէ ուզում արթնութիւն,
Նրա կեանքը, նրա վիճակ
Որ ճնշման տակ և տխուր
Մնում է միշտ փրկող աչքից,
Յաւէտ անտես և անլուր.

III

Բայց, ահ, յանկարծ հաւը խօսեց,
Տալիս է նա աւետիք
Թէ լուսոյ ելքն արդէն բացուեց
Խաւարն արագ կ'ընի չիք,
Կարծես, կասէր, պէտք է վանել
Միտք ու ցնորք յուսահատ,
Խաւարի դէմքն էլ մաքառել
Յուսալ, գործել անընդհատ,

Իրաւ, աչքս երբ դարձուցի
Դէպ սենեկիս պատուհան
Հեռուն իսկոյն նշմարեցի
Արշալուսոյ ծիածան։

IV

Ո՜հ, ինչ սիրուն պատկեր ունիս,
Աւետարեր արշալոյս,
Քեզմով իբրու կարթնու հողիս,
Կը վառուի իմ մարած յոյս։
Թէպէտ մթան մէջ ու հեռուն
Կերևցնես քո պատկեր,
Թէպէտ դուրսը միշտ արեան գոյն
Ծածկած ունի քո լապտեր.
Սակայն ծոցիդ մէջ անկասկած
Արևու գունդ կծածկես,
Ի՛առաւօտեան ժամդ զարկած
Զայն մութ երկրին կբաշխես...։

V

Բայց մեր էլ ե՞րբ պիտի փայլէ
Աւետարեր արշալոյս,
Մեր արևը ե՞րբ պիտ հլնէ.
Պսակել խեղճ Հայի յոյս։

VI

Այո՛, քո մէջն էլ կտեսնեմ
Մեր յուսալիր ապագան,
Այո հայն էլ լոյս կտեսնէ
Միայն թէ լինի միաբան
Հայի խաւարն էլ կցրուի,
Շատ չի տևիր գերութիւն
Գէթ մեր միջէն եթէ վերցուի
Մեր անտարբեր սառնութիւն.
Եթէ գործից յետ չփախչին,
Որոնք ունին ոյժ ու կար,
Եթէ լեզուի հետ վաստակին
Ձեռք ու կորով հաւասար։

1879 20 փետր.

ՄՈՒՐԱՑԱՆ

ՔԱՂՑԱԾՆԵՐԸ

I.

Սաստիկ ցուրտ՝ ձիւնաշատ ձմեռ էր. ձիւնը ծածկել էր ամեն ինչ՝ թէ լաւը, թէ վատը, և իր միատեսակ ճերմակ սաւանով սքօղել էր երկիրը, թաղցրել իր տակ՝ խորդ ու բորդեր, տգեղ ու գեղեցիկ տեսարաններ։

Ս... գիւղում էլ ձմեռ էր, մահաշունչ ձմեռ... պարզըկայ գիշերներ էր լինում. ցերեկները նոյնպէս սոսկալի ցրտեր էր. թռչունները օդի մէջ սառում էին ու ընկնում գետին՝ անշնչանում... մարդիկ երկիւղով էին դուրս գալիս տներից...

Առաւօտ էր. գիւղը կծկուած էր ցրտից. ամեն մարդ իր տանն է, վառարանի, օջախի շուրջը նստած, ոմանք էլ դուրս էին ելնում տներից գործով ու քայլում ամայի փողոցներով, որպէս ստուերներ. դրանց բերնից դուրս ելնող յորդ գոլորշին անմիջապէս սառում էր ու դառաւ դնում՝ բեխերի, միրուքի վրայ. բրդէ թելի նման՝ եղեամը, խաղում էր սառը օդի մէջ...

Այդ օրը արևն էլ չէր երևում, թաղնուել էր ամպերի ետևը և չէր վստահանում դուրս գալ՝ իր անզօրութիւնով մրցել—սառնամանիքի հետ. և միայն խաղաղ շարունակում էր իր կարճ ուղին լուռ հեզութեամբ... իսկապէս երկչոտ էր ու անզօր, որ իր յաղթուած ու դունատ երեսը չէր հանում իրեն ծածկող համարձակ պղտոր ամպերի արանքից։ Հորիզոնը մառախլապատ էր, երկինքը յօնքերը կիտել ու տխուր հայեացքով նայում էր՝ ցրտի ձեռքին խաղալիկ դարձած էակներին, որոնցից՝

ոմանք պատսպարուել էին բնակարաններում և իրանց պատրաստ պաշարը վայելում... իսկ ոմանք ընկնում էին այս ու այն կողմ, մի փշուր ուտելիք ճանկելու, իրանց խստապահանջ քաղցը յագեցնելու...

Մարդիկ, ընտանի կենդանիները, թռչունները՝ ուտելու պաշար ունէին. իսկ վայրի կենդանիները, թռչունները՝ չունէին. և բնութիւնը իր անողորմ խստութիւնը գործ էր դնում, չմտածելով, որ զաւակները կմեռնեն սովատանջ...

Ողորմելի ճնճղուկները թռչկոտում, թրթռում էին բակից-բակ, դռնից-դուռ, խառնում, քչչում նոր թափած աղբակոյտերը... ապա թռչում մտնում խոտի դէզերի մէջ, կամ ծառերի ճիւղերի վրայ կուչ գալի ու նիրհող դիրք ընդունում, օրօրւում բարակ ոստիկների վրայ, և երաղում՝ գարնան զուարթ, ժպտուն, երջանիկ օրերը...

Գիշերները վայրի կենդանիներից աղուէսը գալիս էր գիւղը, հաւարներից հաւ գողանում. շատ անգամ այլ էլ չէր յաջողւում, ենթարկւում էր շների հալածանքին ու սոված փորով փախչում, կեանքը ազատում։ Գայլերը մօտենում էին գիւղին, սկսում իրենց աննկարագրելի ոռնոցը, խանգարում շների հանգիստը. շներն էլ մերթ կաղկանձում էին, մերթ կլանչ-կլանչում, և երբէք չէին սանդում... եթէ պատահում էր քամի՝ սուլելով մռնչում էր անհանգիստ, գիշերները դառնում էր մի անտանելի դժոխային համերգ։

Մօտ օրերում մի քանի դէպք էր պատահել, գայլերը շներին փախցրել և պատառոտել գիւղից հեռու։

Գիւղում ասես կենդանութիւնը մեռած էր։ Փողոցները դատարկ, ամեն ինչ լուռ էր ու պապանձուած. պապանձուած էր նաև գիւղի միակ աղբիւրը. փոքրիկ գետակն էլ տաղ արած, քչացած ջրով, հոսում էր իր մերկութիւնը ծածկող սառուցի տակով։

Վայրի թռչունների, կենդանիների դասին՝ պատկա-

նում էր Օհանենց Արութը իր ընտանիքով, որ կանգնել էր մի պատի տակ, տխուր, զունատ դէմքով, ձեռքերը ծոցում, նրա տառապող դէմքին նկատւում էր թշուառութեան սև կնիքը, որը առհասարակ կրում են խեղճերը. նրա նայուածքն արտայայտում էր վշտի խորունկ զոյութիւնը. ցնցոտիներով հագնուած մարմինը՝ մրսում էր, ականջները կապուտել էին. բեխերը և փափախի ճակատի կողմի մազերը ղռաւով էր ծածկուած, բերնից դուրս եկող գոլորշիից և սառը օդի ազդեցութիւնից.., նա անհանգիստ էր ու վշտացած սպասում էր մարդու, մի բարերարի, որին պատմել էր իր ընտանիքի երեխաների ցաւալի դրութիւնը և խնդրել նպաստ, օգնութիւն... ահա և սպասած մարդը՝ երկու լոշ (հաց) ձեռին, տուեց Արութին ասելով.

—Մենք էլ չունենք, վաղը խմորի ենք... ապա խօսքը փոխելով աւելացրեց,—կովդ ինչու չես ծախում... ծախիր ու սովից փրկիր երեխաներիդ... ինձ լսիր...

—Ախր մի կով է, մի տուն, ինց ծախեմ, պատասխանեց Արութը խեղդուած ցաւոտ շեշտով, հացերը դնելով կռնատակը։

—Ծախիր, Արութ, ծախիր, կովը չի օգնի... ասաց բարերարն ու հեռացաւ։

Արութը սքթած, սառած մարմնով քայլեց դէպի տուն, ձիւնի անախորժ ճռճռոցը հանելով. և՛ քայլում էր և՛ կապուտած շրթունքներով մռմռում, երևի կովը ծախելու և չծախելու հարցն էր լուծում, կամ մտածում երեխաների ու նրանց սպառնացող սոսկալի վտանգի մասին. նա կանգ առաւ մտքի բեռի տակ, ետ նայեց ու էլի շարունակեց քայլել՝ մտախոհ, երազուն հայեացքով, արագ-արագ։

Հասաւ տուն, կանգնեց դռան առաջ. խրճթից լսուեցին մանկական խղճուկ ձայներ.

—...Մայրիկ, սոված եմ, հաց տուր...

Մի ուրիշը աղիողորմ լալով, սիրտ մաշող հեկեկոցով ճչում էր.

—Սոված եմ, սոված եմ...

Մայրը հանդստացնում էր գուրգուրալով.

—Լաց մի լինեք, որդիք, հիմա հայրիկը կգայ՝ հաց կբերի...

Արութը լսելով այդ, սիրտը փուլ եկաւ, աչքերից արտասուք թափուեց. դառնացաւ իր բախտի դէմ ու իրան զսպելով ներս մտաւ։ Աթարի թանձր ծուխը դիզուել էր տանը. դառը հոտը անտանելի էր. երեխաները պատառոտուն շորերով հագնուած՝ շարուել էին կրակի շուրջը, տաքացնում վտիտ մարմինները... Տեսնելով հօրը, մանուկներից երկուսը վեր կացան տեղներից ու բազկատարած վազեցին դէպի նա՝ աղաղակելով.

—Հայ տուր... հաց տուր...

Արութը լացակամեց, կռնատակի հացերը տուեց երեխաներին ու սառած մարմնով ընկաւ կրակի մօտ—խոնաւ գետնին՝ հառաչելով.

—Ա՛խ բախտ... ճակատագիր, կեանք... օրեր... դըժոխքի կեանք, անտանելի վիճակ, ա՛խ... ա՛խ, ասես նրա սրտի խորքի թելերը կտրտուեցին, և մի անյայտ ոգի ձայնակցում էր այդ հառաչանքներին ու լալիս դառնագին։

Երեխաները ձգձգեցին հացը և սկսեցին ագահաբար ծամել. մինչ այդ, տանտիկին Եղսօն լալիս էր ու վշտահար տրորուում. նրա տառապատանջ դէմքը նման էր գերեզմանից դուրս եկած մեռելի դէմքի. աչքերը կարմրած էին, ուռած. թերթևանունքները տմզկուած էր արտասուքի աղի-ջրով. նա իր տարիքին անհամապատասխան ծերացած էր ու կորովացած, երկար տարիների տանջանքը, ճնշուած դրութիւնը շտապել էր իր կնիքը դրոշմել նրա վրայ։ Արութի տասնուչորս տարեկան աղջիկը՝ Անուշը կծկուել էր տան մռայլ մի անկիւնում ու խուլ հեկեկում, կուսական վճիտ արցունքներ թափում... տեսնելով երեխաների ուրախութիւնը, ինքը դադարեց լալուց, աչքերը սրբեց ճղճղուած զգեստի փէշերով, և մի «օֆ» արաւ.

այդ «ոՖ»-ը դուրս եկաւ մի կուսական կրծքից, որ դեռ ոտք չի դրել կեանքի շաւղին, բայց արդէն ճաշակել է նրա սպանիչ դառնութիւնը. սեփական կուրծքը հարուած է ստացել ու խորը խոցուել... Նա մեղմիկ քայլերով մօտեցաւ երեխաներին՝ հացը բաժանեց երեք մասի, ամենքին տուեց իր բաժինը և ինքը նստեց կրակի մօտ։

—Անուշ ջան, բալա, դու ինչո՞ւ չես ուտում, դու էլ սոված ես, կեր... ասաց Եղսօն աղջկան, նայելով նրա գունատ խռովայոյզ դէմքին։

—Թող երեխէքը ուտեն, նրանք փոքր են, հրաժարուեց Անուշը,—չեն դիմանայ...։

Մանուկներն ուրախ-ուրախ ուտում էին ագահաբար. մերթընդմերթ էլ իրար բաժին խլում։

Խրճթում տիրեց լռութիւն... լռեցին երեք ճնշուած սրտեր, լռեցին և երեք՝ ուրախ սրտեր. երեքը ցաւատանջ էին, երեքը անհոգ, երեքը վաղաժամ թոռոմած, երեքը նորափթիթ...

Ծուխը հետզհետէ շատանում էր աթարի մշտավառ կրակից. ծխնելոյզը դժուարանում էր իր մէջ հաւաքել ու արտահանել սառը օդին յանձնել և դրա հետ՝ տան վշտի դէթ մի մասը։

Երկար չտևեց այդ քար լռութիւնը. Արութը քաշ գցած գլուխը բարձրացրեց, շարժեց ծանրաբար, դարձաւ կնոջը.

—Եղսօ, մեր դրութիւնը օրաւուր վատանում է, սովը բուն է դրել մեր տանը, հարկաւոր է մի ճար, մի հնար անել և այդ ճարը այն կլինի, որ մեր ունեցած մի հատիկ կովը ծախենք, մեր երեխաներին ազատենք անողորմ սովի ճանկերից... ի՞նչ կասես։

Կինը շուարած մնաց, շշմեց, ասես շանթահարուած... Նա կովը երեխաներից շատ էր սիրում, խորապէս ազդուեց, սիրտը ճմլուեց, լեզուն բերանում չորացաւ, ոչինչ չկարողացաւ պատասխանել, լռեց. խորասուզուեց մտքերի ծովը... Նա իր տնտման Զէյրանին չէր փոխի ողջ գիւղի հետ, չէր

փոխի նոյնիսկ ողջ աշխարհի հետ։ Ջէյրանը աննման էր, Ջէյրանը անզուգական էր Եղսօի համար. նա լաւ կհամարէր զրկուել գաւակից, քան սիրուն կարմիր Ջէրանից, որը իրանից շատ երախտիք ունէր երեխաների տան վրայ... մի ընտանիք կերակրող էր Ջէյրանը, ինչպէս զրկուել նրանից. դժուար էր, շատ դժուար, մահու չափ ծանր... մտածում էր Եղսօն, և շարունակում լռել՝ մտահոգ, ներքնապէս յուզուած...

—Հ՞ը, ինչ կասես, կրկնեց Արութը։

Դարձեալ լռութիւն... Արութն զգում էր պատճառած ցաւը, բայց ինչ արած, պէտք էր փրկութեան մի ելք որոնել. եթէ ոչ կմեռնեն սովատանջ ու քաղցած... արդէն սովը իշխում էր, և դրա հետևանքը կլինէր մահը... սոսկալի մահը...

Արութը հարցը երեքկնեց։

Երկար լռութիւնից յետոյ, վերջի վերջոյ Եղսօն պատասխանեց.

—Դու գիտես... բայց վայ էդ պատասխանին, որ սրրտի խորքից, մի խորունկ—ախ էլ՝ հետը դուրս բերեց։

Անուշը աւելի տխրեց, նրա կուսական քնքոյշ սրտին ևս ազդեց Ջէյրանը ծախելու վճռականութիւնը։

Այդ ժամանակ մանուկներն էլ ծամծմում էին հացը՝ անհոգ ժպտալով։

Արութը լռութեամբ դուրս գնաց...

II

Կովին եղջիւրները թոկով կապած, Արութը բերել էր բակը։ Կովը կարմիր էր, գեղեցիկ դէմքով, ճակատի մէջ տեղը կար՝ եռանկիւնաձև սպիտակ նշան. կովը վշտոտ էր երևում, աչքերում տեսնուում էր արտասուք. նա իր բաժանուելու և վերջին հրաժեշտի արցունքն էր թափում ու ողբում մօտալուտ մահը, որ վերջ պիտի դնէր սպանդագործի՝ վիզ կտրելու համար մկրտուած՝ դանակը։

Տան անդամները, բացի մէկից, շրջապատել էին կովին, վշտահար դիտում ու լալիս... մի տան յոյս էր, մի

տան ապաւէն, տանում են ծախելու, ինչպէս լաց չլինել. զրկւում են այդ յոյսից։

Եղսօն մօտեցաւ կովին, համբուրեց ճակատը, պռոշները, պարանոցը ու ետ կանգնեց՝ գոչելով.

—Ա՜խ, Զէյրան, զրկւում են քեզանից... բալէ՛ք, ձեր երկրորդ մօրը տանում են...

Արութը՝կովը քաշելով առաջ գնաց։

Տեսարանը սրտաշարժ էր ու յուզիչ. քարը լաց կլինէր, երբ տեսնէր երեխաների հոգեմաշ լացը, հեկեկոցն ու յուսահատ ճիչերը...

Մէկը բղաւում էր.

—Վա՛յ, տարան Զէյրանին...

—Մեր կովը ո՞ւր են տանո՞ւմ... լացակամած աղաղակում էր միւսը։

Իսկ Անուշը հանդարտ լալիս էր։

Մեռած մարդու վերայ այնքան չէին լալ ու հառաչել, որքան այդ կովի համար։

—Գնացէք տուն, բալէ՛ք, գնացէ՛ք, սառաք, ասաց Եղսօն շարունակելով նայել ամուսնու ետևից։

Երեխաները հեռացան։

Եւ երբ կոմը ու ամուսինը ծածկուեցին իսպառ, ինքն էլ հառաչելով մտաւ տուն։ Տունը արդէն աղատուել էր գորշ ծխից, աթարի կրակը հանգել, բացուել էին սև ծխոտուած մռայլ անհամբոյր գերանները, պատերը. մռայլ տեսք էին ստացել խրճթի առարկաները. սև ու մռայլ էր ամեն ինչ, ինչպէս խրճթում պարտկուող ճակատագրի սև կողմին արժանացած էակների սրտերն ու դէմքերը...

—Ի՞նչ պիտի ուտենք, մայրիկ, հարցրեց Անուշը թոյլ ձայնով։

—Մեր հարեան Սաթօից փոխ կառնես... մինչև հիմի չէր տալիս, բայց այսօր կտայ, որովհետև կասես—կովը տարանք ծախելու... շուտով ալիւր կառնենք, հաց կթխենք—ասաց Եղսօն ու մօտեցաւ օջաղին՝ կրակը նորոգի։

—Էս մի շաբթից աւել է,—խօսեց Անուշը,—ամեն օր գնում եմ. միայն առաջի օրն է տուել, իսկ մնացած օրերը ասում էր՝—մենք էլ չունենք. հա, մի օր էլ ասաւ՝—ձեզ տամ, ումից ստանամ... էդ խօսքը սրի պէս տընկուել է սրտումս... գիտես մայրիկ, ինչքան անտանելի է, երբ մի բան ես ուզում—չեն տալիս ու վրէն էլ մի քանի թթու-կծու խօսք են ասում... վերջացրեց ու փէշը տարաւ դէպի աչքերը։

—Լաց մի լինի, բալես, այդպէս են մարդիկ, այդպէս է աշխարհս. ունևորը՝ չունևորին չի պարտական, հարուստը՝ աղքատին, ասում են դրանք. բայց չգիտեն, որ մի օր էլ հարուստը կաղքատանայ, աղքատը՝ կհարստանայ. աշխարհս աստիճան-աստիճան է, որդի, մէկը վեր է գնում՝ երանութիւն, երջանիկ կեանք վարելու... մէկը վայր է գալիս՝ ցաւ, տանջանք, դառնութիւն ճաշակելու, որպէս մենք ենք, բալես... բայց մենակ մենք չենք այսպէս խեղճ. մեզ պէս հազարաւոր խեղճեր կան էս ապառաժ աշխարհում, էս անգութ երկրում...

Դրսեից լսուեց տաւարի բառաչ, հետն էլ՝ «հօ, հօ»։

Եղսօն շտապեց դուռը. Արութն էր. կովը երկար պտտել էր գիւղում, ամենքին ասել, մինչև անգամ խնդրել, որ առնեն, այնուամենայնիւ՝ ոչ ոք չի կամեցել, չի ցանկացել գնել. հիմա յետ է բերել և ուզում է Ջ... աւանը տանել, այնտեղ ծախել։ Կնօջն ասաց, բաշլըղը բերի, և որ քանի շուտ գնայ կծախի ու շուտ կվերադառնայ. գուցէ այնտեղ աւել գնով վաճառի... Մենակ չէր գնում Արութը, հինգ հոգի էին. հինգին էլ ցաւն ու կարիքն էր ստիպել այս դաժան ահարկու ձմրանը ճամբորդել, այն էլ՝ այն վտանգաւոր ճանապարհով, որ քանի՞ քանիսի մահուան պատճառ է եղել, բուք բորան արել՝ խեղդել, անշնչացրել...

Եղօենց Ասօն էլ եղն էր տանում նոյնպէս ծախելու, ընտանիքի ցաւն ու կարիքը հոգալու... Երկու կենդանին առաջ արին ու հինգով ճանապարհ ընկան...

Եղսօն նայում էր՝ ամուսնու և տարուող տան միակ յոյսի ետևից տխուր դառնութեամբ. նրա մտքերը պաշարուած էր սև երևակայութիւններով... այն ճանապարհը, որով պիտի անցնէր ամուսինը, շատ քարասիրտ էր, անողորմ. ձմեռ չէր լինի, որ այդ ճանապարհին մարդ թիփախեղդ չլինէր, բուք բորանի չհանդիպէր, չ'անյայտանար ձիւնի տակ. երկիւղ էր անում Եղսօն ամուսնու մասին ու նախապաշարւում՝ մռայլ, սև մտքերով. Նա շարժուեց տեղից և մտախոհ, ծանր քայլերով մտաւ տուն:

—Հայրիկը գնաց շհարը*), որդիք, այնտեղից ձեզ համար շորեր կբերի, որ հագնէք, էլ չմրսէք... փող կբերի, հաց կառնի, որ ուտէք կշտանաք, էլ չսովէք...

—Բա մեր Զէյրանը ո՞վ պտի ըլի, հարցրեց մանուկներից մէկը՝ տխուր:

Մայրը պատասխանի փոխարէն հառաչեց ու լռեց:

Մի առժամանակ խրճթում իշխեց լռութիւն...

Օջաղը բռբռալով վառւում էր. երեխաները դարձեալ գրաւել էին իրանց տեղերը՝ օջաղի շուրջը, տաքացնում էին սառած, մերկ, վտիտ մարմինները:

—Անուշ բալա՛ս, գնա Սաթօից երկու հաց բեր փոխ, երկու օր է բերանս նշխարք**) չեմ դրել, անօթի եմ, գնա՛, որդի, գնա՛...

—Մայրիկ, ես էլ սոված եմ, սիրտս տրորուում է. երկու օր է գնում, ես էլ ոչինչ չեմ կերել... գնամ, տեսնենք դա էլ կտա՞յ, թէ իր դայդի կըշքի, ասաց Անուշն ու դուրս գնաց:

Մայրը նայեց աղջկայ ետևից և գլուխը օրօրեց.

—Քօռանամ ես, որդի, քո հասակակիցները՝ երջանիկ, ուրախ զուարթ՝ խաղում են, թռչկոտում... մինչդեռ դու կուշտ փորով, հաց էլ չես ուտում... Ա՛խ Աստուած, սա էլ Քո ստեղծածը չէ՞... Ի՞նչու մէկին հասցնում ես՝ մեծ փառքի, վայելքի, որ չգիտեն ինչպէս շռայլել ու

*) Գիւղացիները թէ քաղաքին, թէ գիւղաքաղաքին «շհար» են ասում:
**) Պատառ հաց:

ծախսել... իսկ միւսին՝ օրուայ հացի կարօտ, մերկ, քաղցած, սրա նրա՝ դուռը ընկած, որ լաց ու կոծով է անց կացնում օրուայ շատ մասը, աղերսելով մուրալով է ապրում... Անարդար դատաստան է...

Դուռը ճռռաց. Անուշը ներս մտաւ.

—Մայրիկ, ասում է՝ չունենք, քեզ ասել եմ, որ էլ չգաս մեր տուն, և շատ էլ նեղացաւ, բարկացաւ վրաս՝ ասաւ՝ «կորի»։

—Ոչինչ, որդի... Մարիամի տունը գնա՝ ասա՝—հայրիկս կովը ծախելու է տարել, շուտով հաց կունենանք... ձեր փոխը կըտանք... խօսեց Եղսօն լալկան ձայնով,—Քար հարևաններ, ապառաժ, անգութներ... բա ձեր խիղճը մեռած է, որ սովածը ձեզնից հաց է փոխ ուզում՝ չէք տալի... անգութ անխիղճներ...

Անուշը՝ գնաց եկաւ, մի հաց փէշում փաթըթած, ուրախադէմ, բայց գունատ. դալկացած դէմքը, ցրտից կապտել էր. նա մօտեցաւ մօրը, հացը տուեց նրան՝ ասելով.

—Գնացի, ղոնաղ *) ունէին, որ ասացի, երևի ղոնաղից ամաչեց, էնտուր տուեց, թէ չէ չէր տալ...

—Օ՜... անողորմ աշխարհ, անգութ մարդիկ. մէկը՝ ուտում է խմում, մէկը՝ սոված է քնում. մի տեղ՝ ուրախութիւն, խնդութիւն, ծիծաղ, մի տեղ՝ տրտմութիւն, լաց, սուգ ու վիշտ... ինչպէս աշխարհ է, մէկը՝ միւսի ցաւերին, դարդին անտարբեր. մրմնջում էր Եղսօն հացը լմլմորելով։

—Մայրիկ, հայրիկը ե՞րբ կգայ, հարցրեց Անուշը, ճակատին թափուած սև գանգուր մազերը ետ տալով։

—Է՛գուց առաւօտ. օ՜ հիմի ինչպէս է մրսում, հագի շորերը՝ բարակ են, ճղճղուած... էն գիժ սարով պտի անցնի, էն զուլումի սարովը, որտեղ մարդիկ են ցրտահար ըլում...

---

*) հիւր։

—Հա, մայրիկ Դվալը պտի անցնի... ուր անցեալ տարի մեր հարևան Խէչօն թեփախեղդ եղաւ... հա, փիս սար է...

—Է՜հ որդի, մի յիշիր էդ անունը, սիրտս սևանում է, աչքերս մթնում. նզովուի էդ սարը, գէշ սար է, մարդակեր սար է, փիս էլ ճամբա է... և նա գլուխը կախեց կրծքին ու լռեց. արտասուքի երկու կաթիլ ընկաւ աչքերից։

Լռւռ էին...

III

Երեկոյ էր. տեղաշորը գցեցին չոր խսիրի վրայ. պատառոտուն հնամաշ էր՝ վերմակը, դօշէկը և բարձը, բուրդը դուրս էր թափւում ճեղքերից. երեխաները հանուեցին, մտան անկողինը, ու սկսեցին փսփսուկով խօսել... Քիչ յետոյ Անուշն էլ պարկեց. մնաց միայն տան մայրը՝ օջաղի ղրաղին նստած, սև գալարուն մտքերով լի գլուխը կրծքին կախած... նրա աչքերի առաջ՝ ներկայանում էին ահաւոր այլանդակ պատկերներ, իրանց սարսեցուցիչ տարօրինակ տեսքերով ու մռայլում նրա դէմքը։

Տունը մութն էր ու խաւար, ճրագ չկար. աթարի կրակն էր, որ պլպլում էր, ինչպէս հոգևարքի մէջ հիւանդ, ու լուսաւորում նրա դէմքը, խրճթի սև անկիւնները ու էլի իջնում, շուրջը թողնում խաւար, անթափանց ճնշող խաւար...

Դրսևը քամին փչում էր՝ անհանգիստ մռնչալով. շները սկսեցին կախկանձել, կոնգռռնալ. իրանց չարագուշակ ձայներով վրդովեցին գիշերային անդորրութիւնը և աղմկեցին ամբողջ գիւղը. իսկ գիւղը քնած էր՝ ցրտից ճնշուած, կծկուած...

Այդ անախորժ կաղկանձոցը վատ էր թւում Եղսօին. նա զայրացաւ, յուզուեց.

—Ձեր տիրոջ գլուխը ուտէք, բէխեր անտէրներ, ով գիտի էլ ինչ չարիք է գալու, ինչ էք գուշակել... ձեր

ձէնը շուտ է լսում Աստուած, ձեր գանգատը, ձեր բողոքը, նա թէզ է կատարում... անտէր մնաք, սատկէք... մրմնջում էին Եղսօի շրթունքները. նա աջ ձեռքը նեցուկ տուեց գլխին, աչքերը յառեց կրակի պլպլացող բոցին, ու լուռ, մտքի ետևից ընկաւ...

Գայլերը ոռնացին՝ սոված, քաղցածի ոռնոցով. վերսկսուեց ամեն գիշերուայ դժոխային համերգը...

Տանտիկինը հանուեց մտաւ անկողին. երեխաներին պինդ-պինդ ծածկեց, ինքը մնաց՝ արթուն լուռ. քունը փախաւ աչքերից... էլի այլանդակ, էլի ահաւոր, սարսափելի պատկերներ... երեսը ծածկեց վերմակով, գլուխը կոխեց խորը, որպէս զի չտեսնէ այդ. ի զուր. նա աչքերը խփեց քնել ձևացաւ. բայց քունը խուսափում էր աչքերից, սև մտքերի ժխորը կուտակւում էր գլխում, ահաւոր պատկերները բազմանում էին առաջը...

—Ձեր տիրոջ գլուխը ուտէք, մռմռաց նա ու լռեց, աչքերը փակեց, երեսը ծածկեց. ուզեց վանել իրան պաշարող՝ խճճուած երևակայութիւնները... ի զուր...

Կէս գիշեր էր, այնուամենայնիւ Եղսօն չքնեց, շատ տանջուեց, շուռ ու մուռ եկաւ անկողնում. տեղաշորը ասես փշերով ու ասեղներով լինէր ցանուած, որ կարծես ծակծկում էր նրա մարմինը ու շուռ ու մուռ տալի... Նա նմանւում էր այն թռչուններին, որոնք ծուար արած անքուն հսկում են ձագուկներին, պաշտպանելու որև է վըտանգից, գիշերային գիշատիչ թռչուններից. դրա երեխաներին էլ վտանգ սպառնացողը՝ սովն էր, իր մահուսարսափով զինուած, որ սողոսկել էր ներս, ուզում էր կոտորած անել...

Երեխաները քնել էին մշմշալով, ամեն ինչ մոռացած. քունն էր երջանկութիւն այս տան համար, բայց նա էլ չէր մօտենում՝ տառապողի տանջուած ցաւոտ աչքերին...

Խրճթում խաւար է ու լռութիւն. միայն ճպուռն էր, որ իր ձայնով խռովում էր խաղաղ լռութիւնը։

Երեխաներից մէկը զարթնեց՝ թնդ-թնդաց, լաց եղաւ, կամաց-կամաց ձայնը ուժեղացրեց...

Մայրը լուռ է, չի խօսում։

—Հաց, սոված եմ... մրմնջաց երեխան ցաւոտ շեշտով.

Մայրը լսում է, չի խօսում. լաց կլինի ու կլռի, մտածեց նա։

Բայց և այնպէս երեխան հետզհետէ բարձրացնում էր ձայնը ու բացականչում՝ «սոված եմ»...

—Ի՞նչ է, Ներսօ ջան, վերջապէս հարցրեց մայրը։

—Սոված եմ...

Չորս տարեկան երեխայ էր Ներսօն, հիւանդոտ վտիտ մարմնով. այդ հասակին դեռ ոտքի չէր կանգնում, ամբողջ օրով մի տեղ նստացնում են, և նա տեղից չէ շարժւում։ Զափազանց շատակեր էր ու լալկան. երբ սկսում էր լալ, էլ ձայնը չէր կտրում ու շարունակ միակերպ լալիս էր անընդհատ։

—Քնիր, Ներսօ ջան, հաց չուչնենք, քնիր...

—Չէ, սոված եմ, հաց... հաց տուր...

—Քնիր, բալաս, քնիր. հաց չկայ... սակայն այդ խօսքերը Ներսօին չէին կարող հանգստացնել. նա շարունակում էր աղիողորմ՝ լալ ու հաց ուզել։

Մայրը տեսաւ որ զուր է հանգստացնելու ջանքեր գործ դնելը, երեխին գրկեց, սղմեց կրծքին, գուրգուրեց, փաղաքշեց. ի զուր... հեռանպէս Ներսօն չէ դադարում լալուց. տիրող խաւարը՝ աւելի ու աւելի սրտաճաք անում երեխային. նա չէ կարողանում տեսնել մօր երեսը, իրան շրջապատող առարկաները. նրան ամեն առարկայ թւում է՝ թէ կենդանի է, կերպարանք ունի, իրան վախեցնում է. և աւելի է բորբոքւում, լալիս...

Մայրը ճարահատուած չգիտէ ինչ անել. մտածեց և վճռեց գնալ հարևանների մէկից հաց խնդրել, բերել մանկան ձայնը կտրել. բայց ինչպէս հարևաններին անհանգիստ անել, քնածներին արթնացնել, բան խնդրել. դա շատ դժուար է, կփնթփնթան... մտածում էր նա, և վրճ-

ռեց գնալ, հագնուեց ու վճռական քայլերով մօտեցաւ դրան, բաց արաւ՝ նայեց շուրջը, նկատեց, որ մի կենդանի, զոյգ բոցավառ աչքերով, դէպի իրան է գալիս... թուլացաւ, մազերը դիզացան, սիրտը բաբախեց, աչքերը ասես մթնեց, ծնկները ծալուեցին... ուժասպառ շեմքից մի քայլ ետ կանգնեց ու դուռը ծածկեց, էլ չկարողացաւ փակը ամրացնել. դետնին նստեց ու մէջքով սղմել սկսեց դուռը որքան ոյժ ունէր, պինդ, պինդ...

Երեխան դեռ լալիս է բարձրաձայն, նրա ձայնից միւսներն էլ, թառժաժ էին եղել, հանգստացնում էին Նէրսօին...

Եղսօն ուշի գալով, շփոթութիւնից զգաստացաւ, վեր կացաւ, դրան փակը ամրացրեց ու էլի սղմեց մէջքով։

—Օ՜յ, անտէր մնաս, գէլ, մռմռում է նա,—ինչքան վախեցայ, ճռներս թուլացան, սիրտս կտրուեց... օ. հալբաթ դա էլ սոված է... դրան էլ քաղծածութիւնն է ստիպել գիւղամէջ մտնել... մի բան ճանկելու՝ սոված փորի համար... վա՛յ անտէր մնաս... խեղճ կենդանի, սոված է... քաղցածը ամեն բան կ՚անէ... կպատառոտէր, եթէ չտեսնէի, անշուշտ կպատառոտէր... սոված չի ուզի մեռնել, ձեռքը մի բան ընկաւ կրբրբրի, իրան կերակուր կը շինի... ա՛յ, հենց ես, ինձ էլ քաղցն է ստիպել էս կէս գիշերին դուրս գալ՝ հաց խնդրել... իսկ դրանք ումից խընդրեն... ուրեմն պէտք է պատահածին պատառոտեն... խեղճ քաղցածներ... քաղցը ստիպում է՝ ամեն միջոցի դիմել, գողութիւն, աւազակութիւն, մարդասպանութիւն անել... օֆ, սով, սով. անիծուեսս դու, սով։ Նա հեռացաւ դռնից։

—Ցաւ տեսնողը ցաւը կհասկանայ... այսպէս երկար խօսում էր Եղսօն, երբ Անուշը խնդրեց պարկել. նա նորից անկողին մտաւ, անիծելով այս չար գիշերը։

Երեխան երկար լալուց ձայնը խզուել էր. հիմա հանդարտ նստում էր։

Եղսօն յիշեց ամուսնուն, երևակայեց նրա վիճակը,

դրութիւնը. և մտայոյզ, վախեցած սրտով ծածկեց երեսը ու տաղ արաւ։

Դրսևը խենթ քամիները շարունակում էին հչալ, մռնչալ. գայլերը՝ ոռնալ. շները՝ կաղկանձել... համերգը կատարեալ էր։

Խրճթում՝ թանձր խաւարը սկսել էր բացուել, առարկաները գծագրւում էին անորոշ կերպով. երդիկից ներս էր ընկնում մի աննշմարելի լուսաւորութիւն...

Լուսադէմ էր։

IV

Առաւօտեան Անուշը զարթեց, հագնուեց, օջաղը վառեց, հարևանների դռներն ընկաւ՝ հաց ճարեց, տուեց երեխաներին... Մայրը վախից հիւանդ էր. դողում, լքլքում էր, մարմինը թուլացել անզօրացել էր... Անուշը մօտեցաւ մօրը՝ հարցնելով.

—Հաց բերեմ քեզ համար, մայրիկ։

—Չէ, որդի ջան, ինձ հացը էլ կուլ չի գնալ... Ջանս դողը բռնել է... սրտաճաք եղայ գիշերը, թէ որ ապրեմ՝ մեծ բաղտաւորութիւն կըլինի... ախ բալէք, կոտոլ բալէք... և նա հեկեկաց.—Անուշ ջան, դարձաւ աղջկան,—գնա առուիցը ջուր բեր, խմորի համար պատրաստութիւն տեսնենք, թաղարէք անենք, որ հիմա հայրդ կըգայ, ալիւր կառնի... դէ գնա բալաս, դէ շուտ, գնա...

Անուշը լալիս էր մօր խօսքերի վրայ. «Թէ որ ապրեմ», ինչ է նշանակում այդ. նա թողեց մօրը հեռացաւ, կուժը ուսեց և դուրս ելաւ տնից...

Եղսօն տնքում էր վախի ցաւից. յիշեց գիշերուան արկածը, գայլի զոյգ աչքերը, բոցավառ կրակոտ աչքերը, որոնց մէջ ասես չարիքն էր քրքջում և քաղցածութիւնը արտայայտւում. յիշեց և իրեն պատած ահ ու դողը, վախ ու սարսափը... ամբողջ մարմնով սարսռաց, դողաց, սիրտը թպրտաց... Նորից ուշի գալով մտաբերեց ամուսնուն, մտածեց նրա վտանգաւոր ճանապարհի մասին։

—Տեսնես կովը ծախեց, թէ չէ, շշնչում էր նա,— գալիս է, թէ ոչ. ա՜խ էն մարդակեր սարը, էն գէշ ճանապարհը, էն բուք բորանի հնոցը, եարաբ գալիս է, և մի խորունկ հառաչեց...

Ներս մտաւ Անուշը, կուժը ուսին, կապտուած դէմքով. ջուրը դատարկեց, տաքացաւ. նայեց մօր տխուր մռայլ դէմքին, սիրտը լցուեց... կուժը վերցրեց ու նորից դուրս ելաւ...

Հարևաններից՝ ոչ ոք չէր մտնում խեղճերի ընակարանը, խօսում հետները, յոյս տալի... չէին օգնում գործով, գոնէ՝ յոյս տային, լոկ խօսքով մխիթարէին, որոնցով փոքր ինչ թեթևանում է վիշտը... ոչ գործով էին օգնում, ոչ խօսքով. անգութներ էին ու անխիղճներ...

Ցաւի աշխարհում մարդկանց անտարբերութիւնը առաւել ցաւ է, սպանիչ ցաւ։

Անուշը ջուրը կրեց, թթխմոր պատրաստեց. մինչդեռ մայրը ճգնում է ՝ թալ անկողնում՝ շշմածի նման...

Ճաշը անցաւ. Արութը դեռ չկար ու չկար. ընտանիքի աչքը ճանապարհի էր, սպասում էին...

Քամին փչում էր կատաղի, մռնչալով լիզում ձիւնի երեսը, ձեան փոշին ցրիւ տալի, լցնում փողոցները, մարդկանց աչք ու բերան, մարդու մոլորեցնում...

Անուշը անհանգիստ դուրս ու ներս է անում, նայում այն ճանապարհին, որտեղից պիտի գար հայրը. նայում էր երկար, երկար...

Բայց հայրը չէր երևում, չկար, ուշացաւ. շատ ուշացաւ խոստացած ժամանակից. արդէն երեկոյ էր. շըղթայազերծ հողմերը ոռնում էին կատաղի...

V

Անցաւ մի գիշեր ևս. մի սպանիչ գիշեր, իր այլանդակ ամբողջութիւնով. կրկնուեցին ամեն գիշերուայ երևոյթները՝ գայլերը ոռնացին, շները կաղկանձեցին, քամիները փչեցին. երեխաները լաց եղան՝ հաց ուզեցին.

խրճթում թանձր խաւարը թուխս նստեց...։ Եղանակն էլ իր ազդեցութիւնը ցոյց տուեց՝ բոլորին կծկեց, պարզկայ արաւ, անտանելի, պապանձեցնող, մեռցնող պարզկայ... Եղսօն դարձեալ անկողնում է. վախի ցաւը ծանրացել է...

—Անուշ... լսուեց դրսից մի նուազ, բարակ ձայն։

Անուշը շտապով դուրս ելաւ։ Եղօենց Ասօի աղջիկը՝ Գիւլօն էր, իր ընկերուհին, ցաւով էլ ընկերուհի, դարդով էլ, վշտով էլ. Անուշը մօտեցաւ նրան. բարևեց և հարցրեց.

—Ի՞նչ ես ասում, Գիւլօ ջան.

—Հայրս չեկաւ. քո հայրը չի՞ եկել...

—Չէ, մայրիկս էլ հիւանդացել է, երկու օր է անկողնի մէջ է, հայրս չեկաւ. մտքովս շատ վատ բաներ է անցնում...

—Իմ մտքովս աւելի վատ. ախ, գիտես էն սարը, շատ գէշ սար է, Անուշ, շատ...

—Մեր երեխէքն էլ սոված են, էսօր ոչինչ չեն կերել, տանը մի կտոր հաց չունենք. շների, մկների ու հաւերի բաժինն էլ Աստուած շատ է համարել. քանի օր է ուրիշից ենք փոխ առնում, էն էլ չեն տալիս... ախ խեղճ ծնողներ, ինչքան հոգս ունեն։

—Ա՜խ, Անուշ ջան, ես հենց գիտեմ էս աւեր գիւղում մենակ մենք ենք դժբախտ ու անճար. քո ասելով ձեր օրը մերից վատ է, ծվվէ...

—Գիւլօ ջան, ցուրտ է՝ գնանք տուն տաքացի...

—Չէ, Անուշ ջան, գնամ, մայրս խաբարի է սպասում, անհանգիստ է, վատ երազ է տեսել. դէ մնաս բարի.

—Գնաս բարի...

Եւ երկու ընկերուհիները բաժանուեցին իրարից, վշտոտ սրտով ամենքը մի կողմ...

Տան շէմքում Անուշը տեսաւ մի ծիտ ընկած էր գետին, վերցրեց, սառած էր՝ փէտացած մարմնով։ Ձմրան սողոմելի զոհերից մէկն է, մտածեց նա ու ներս մտաւ։

—Մայրիկ, էս ծիտը ցրտից սառել է, տես...

—Խեղճ կենդանի, սոված է եղել. ընից դուրս է եկել մի բան ճարելու, բայց ցուրտը անողորմաբար է վարուել... Ձմեռը իր ցրտով, դաժանութիւնով, կենդանի արարածներին չի ջոկում իրարից, ամենքի հետ էլ մի տեսակ է վարուում... օ՜. որդի, սա չար նշան է... սիրտս սկսեց թոթռալ, աչքերս սեանում է. օֆ... նա գլուխը քաշ գցեց ու մնաց լուռ։

Անուշը նայում էր մօրը շշմածի պէս։

—Հայրիկդ չեկաւ. ջուրը, թթխմորը պատրաստեցինք, բայց...

—Ի՞նչ, մայրիկ...

—Է՜հ, որդի, հազար ու մի բան է անցնում մտքովս, ով գիտի... չեկաւ...

Գիւղում ճրագները վառուեցին, մթութիւնը իջաւ երկրի վրայ. վերևում աստղերը թարթեցին նսեմ փայլով, անտարբեր ցաւերին ու վշտերին։

Գիւղը լուռ էր։

Արուեստի տանն էլ անհանգիստ լռութիւն կար, խաւարի մէջ մայր ու աղջիկ էին արթուն. երբեմն փսփսում էին, երբեմն լռում՝ մտքերի ետևից ընկնում, խորունկ խորհում...

Շունը հաջաց... ոտնաձայներ լսուեցին։

—Մայրիկ, հայրիկն է...

—Սուս, դողում եմ, երկիւղ է պատել ինձ, ինչ որ վատ բան եմ զգում...

Անուշը լռեց, շունը նոյնպէս։

Անցաւ կէս ժամ, մայր ու աղջիկ լուռ են. նորից շունը հաջաց, վրայ պրծաւ. ոտնաձայներ, խորհրդաւոր խօսակցութիւն է լսւում...

—Հայրիկն է.

—Սուս...

Թրը՛խկ, թրը՛խկ... դուռը թակեցին։

. . . . .

Թրը՛խ, թրը՛խկ... այս անգամ աւելի ուժգին։

—Ո՞վ էք, ձայնեց Անուշը խաւարի միջից։

—Դուռը բաց, որդի։

—Մայրիկ, հայրիկն է...

—Չէ, նրա ձայնը չի...

—Ո՞վ ես... հարցրեց անուշը ջղայնօրէն։

—Վարդանենց Մխօն։

—Հօրդ ընկերն է, բաց, հեռը գնացողներից մէկը, ասաց Եղսօն՝ փոքր ինչ զուարթացած և անկողնի մէջ նստեց։

Դուռը ճռնչալով բացուեց. ներս մտան երեք մարդ՝ զինուորի մի հին վերարկուի մէջ փափաթած երկար ծանր բան երկուսով բռնած, վեր դրին գետին, և ծանր վշտալից «ախ» արձակեցին։ Մէկի ձեռքինն էլ ճրագ էր։

—Ախպէր Մխօ, Արութը ուր է, խզուած ձայնով խօսեց Եղսօն։

—Ա՛խ քուրիկ... զուլում պատահեց...

—Ի՞նչ, ցնցուեց Եղսօն։

—Օ՜, քուրիկ... ահա նա, Մխօն ձեռքը պարզեց դէպի գետին դրած փաթաթը ու դառն դառն հեկեկաց։

—Վա՛յ, տունս քանդուել է, ծղրտաց Եղսօն անկողնից դուրս սողալով...

Վա՛յ, հայրիկ ջան... ճչաց Անուշն ու ընկաւ հօր դիակի վրայ հեկեկոցից խեղդուելով։

Շփոթութիւն տիրեց. վա՛յ, վա՛յը ընկաւ...

Քուրիկ, քուրիկ... բղաւում է Մխօն.

Եղսօն լուռ է, անդգայ, ուշագնաց է եղել. ջուր ցանեցին երեսին, գլխին. ականջները քաշեցին... հազիւ հազ ուշի եկաւ՝ թուլացած կիսամեռ։

Անուշը շարունակում էր ճչալ.

—Հայրիկ ջան, հայրիկ ջան...

Իսկ մայրը աչքերը չռած հևում է, արցունքը սառել չորացել են աչքերում. շշմած խելագարի է նման...

Այդ ձայներից երեխաները՝ զարթել, վվլոցն էին ընկել...

Այդ երիկուն գիւղը երկու դիակ մտաւ, երկու անճարի, երկու աղքատ տառապեալի դիակ, որոնց ընտանիքների աչքերը՝ յուսով յառած էր ճանապարհին. անցրին օրեր, գիշերներ, անհանգստութեան մէջ, և ահա սպասածները, որ գնացել էին՝ ոտքով, ողջ առողջ. այժմ... այժմ վերադարձել են՝ սայլով անկենդան, մեռած, աշխարհի ցաւերից ազատուած։

Մխոն և միւս երկու ընկերը՝ մնացին մինչև լուսաբաց։

Առաւօտեան հարևանները իմացան սոսկալի դոյժը, որ առանց արտասուքի չէին լսում։

Արութի տունը՝ կամաց-կամաց հարևաններով լցուեց. սկսեցին հարց ու փորձ անել դէպքի մասին. Մխոն, որ երեքի մէջ աչքի էր ընկնում հասկացողութեամբ, պատմել սկսեց.

—Այստեղից գնալուս, ճանապարհին շատ ցուրտ էր, մարդու մարմինը փշաքաղւում էր սարսռում. հասանք շհաբը, Արութը իր կովը ծախեց 17 մանէթի. Ասօն իր եզը՝ 23-ի։ Յետոյ մտանք խանութները, չոթ կտոր առանք՝ մեզ երեքիս համար, նա ցոյց տուեց ընկերներին,—իսկ խեղճ Արութն ու Ասօն՝ ոչինչ չառան. և որովհետև մութը ընկել էր, մինչև մեր առուտուր վերջացնելը, գնացինք՝ մի բարի մարդի դոմում գիշերեցինք. թշնամիս չըլի ընտեղ, ինչքան կեղտոտ էր, տաւարի աղբի հոտը խեղդում էր, Աստուած հեռու տանի... դէ թող էն էլ քնել համարուէր... Առաւօտը վեր կացանք, ճամբա ընկանք. շատ վատ աւինդ էր, թիփի, բորան-բորեաղ էր բարձրացել. ձնի փոշին լցուում էր ճանապարհները, մարդու երեսով տալի, բերան աչքեր լցնում, մարդ մոլորեցնում... Ընկերներիս ասի՝—ետ դառնանք, թիփախեղդ կըլենք... Արութն ու Ասօն չը լսեցին։

Մեր երեխեքը սոված, աչքերը ճամբի, մեզ են սպասում, ասացին ու երկուսով շարունակեցին քայլել արագարագ, գնալով դէպի բուքի սառը ծոցը, բորանի պաղ հնոցի արգանդը... դբա մահը... Մենք երեքով ետ դառանք շհարը, մի օր անցրինք, էլի գիշերեցիք. նոր միւս առաւօտ ճամբա ընկանք, օրը քիչ կակղող էր. հասանք սարի գլուխը, որ պիտի անցնէինք էս կողմը... տեսնենք մէկը ընկած է երեսի վրայ, փռուած... մօտեցանք... Ասօն էր՝ սառած-փետացած, անշունչ. մենք զարզանդեցինք, մազերնիս դիզացան... էլ ի՞նչ կարող էինք անել... Նայեցինք՝ էս ու էն կողմ՝ սայլ, ֆուգօն չկա՛յ... ո՞րտեղից պիտի լինէր, ո՞վ դուրս կըգար էդպէս օրը... յանկարծ աչքովս ընկաւ մի փափախ, ճամբի ղրաղին... երեքով թեքուեցինք էն կողմը... փափախը վեր կալանք, գլուխ երևաց, ամբողջ մարմինը ձնի հաստ շերտով էր ծածկուած, միայն գլուխն էր բաց մնացել... ձնի դամբարանը չէր ուզեցել տառապող գլուխ թագցնել տակը... շարժեցինք, քաշեցինք Ասօի մօտ, դա էլ—Արութն էր, ջրատար խեղճ Արութը... նրա պէս՝ սառած ու չորացած... Մենք նմանում էինք կռուի դաշտում դիակ հաւաքողների. այդ թշնամին աւելի անողորմ էր եղել, առանց վիրաւորելու մարդկանց հուպ էր տուել, բերան աչքեր ձնով լցրել, սառցրել... վերևում ագռաւները կռռում էին, խելագար պտուտներ անում, սոված էին. սառած թևները բաց, ձնի երեսին փռուածներ էլ կային... Ես գնացի շհարը մի սայլ լծել տուի ու բերի... շինելները [1]) շինեցինք դագաղներ, սայլը եղաւ դագաղատար... և մենք՝ երեքով լուռ ու մունջ յուղարկաւորներ... ակները գլորուում էին ձիւնը ակօսելով, ցաւոտ ճռնչալով... նրանք ասես ողբում էին իրանց մէջքի բեռի համար... ագռաւները վերևում կռռում էին՝ սոված, ցրտից ճնշուած... Մութ ընկաւ. հասանք այստեղ... դէ՞ ի՞նչ անենք. մենք բոլորս էլ ցաւի որդիք ենք, ծնուել

---

[1]) Վերարկու։

ենք ապրելու ու մեռնելու համար, բայց վա՛յ էն ապրելուն, շունը մեզնից լաւ է ապրում. մեռնում ենք շնից բեթար. ցաւը մեզ է բաժին, մենք ցաւին... ողորմի իրանց՝ տանջուեցին, ցաւ տեսան և մեռան... Էհ, մենք էլ մի օր՝ շանսատակ կըլենք... վերջացրեց Մխոն, աչքերի արտասուքը սրբելով։

Ունկնդիրները, որ լացակամած լսողութիւնները լրած՝ լսում էին, «ա՛խ, ա՛խ» արին, ափսոսացին, ոմանք էլ լաց եղան...

Այրիացած Եղսօն՝ աչքերը չռած, հևում է. մի բառ անգամ չէ կարողանում արտասանել. նայում է երեխաներին, աչքերը սղմում. բայց կաթիլ չէ ընկնում...

Անուշը մղկտում է, լալիս. բոլորն էլ հետը միակերպ մրմնջում են...

Այդ օրը՝ երկու թիփախեղդ եղածներին՝ Արութին ու Ասօին թաղեցին։

VI

Միւս օրը, Արութի տունը դարձեալ լիքն էր հարեւաններով. դարձեալ տիրում էր նոյն սուք շիւանը՝ աւելի աղէտալի, աւելի ողբալի...

Քահանան եկաւ տիրացուն հետը... մի քանի մարդ մօտեցան տէրտէրին.

—Տէրտէր Ջան, աջիդ դուրբան, փող չկա՛յ, էս մէկին առանց «թաղմահարկի» թաղի, եղած 17 մանէթը էն ողորմած Արութի վրայ ծախսուեց, կապէկ չմնաց...

Տէրտէրը ձեռքը շարժեց, խռպոտ ձայնով ասաց.

—Էդպէս բան չկայ, դուք բարեկամներդ կարող էք տալ, ես ինչ մեղաւոր եմ, որ չկայ. մեռելը էլ ոնց հանգիստ կըմնայ գերեզմանի տակ, որ առանց թաղման վարձի թաղուի։

—Այդ էլ դրուստ է, տէրտէր Ջան, բայց որ չկա՛յ...

—Ճարեցէ՛ք... ասաց տէրտէրը վճռական։

Անուշը լալիս էր. մազերը փետտելով, կուսական գլուխը ծեծելով՝ ճչում.

—Անտէր, որբ մնացինք...

Մխոն մի անկիւնում նստած մռմռում է.

—Ա՛յ, գետինը մտնի էդպէս տէրտէրը, գետինը մըտնեն էսպէս հարևանները, որ միայն մեռած ժամանակ են մարդու ցաւում. ուր էիք դուք, երբ խեղճ մարդը սոված դռներն ընկած հաց էր մուրում... հիմի հաւաքուել էք՝ թէ ինչ. ցոյց տալու, որ մենք ցաւում ենք էս խեղճ ընտանիքին... առերես, կեղծաւոր մարդիկ, արտաքուստ ցոյց էք տալի՝ ցաւակիցներ ենք, իսկ ներքուստ՝ ով գիտի... էհ մենակ սրանք չեն էսպէս, աշխարհս հէնց այդպէս է, մարդու կենդանի ժամանակ՝ բանի տեղ չեն դնի, դրութեան մէջ չեն մտնի... իսկ որ մեռաւ՝ կցաւեն, կըվշվշան, կափսոսեն, «խեղճ մարդ» կասեն ու կմոռանան իրանց անտարբերութիւնը՝ նրա կենդանի ժամանակ... մարդիկ տարօրինակ բաներ են... և նա դուրս գնաց տէրտէրի երեսին մի արհամարհական հայեացք ձգելով...

Անուշը ճչում է.

—Մայրիկ ջան, մայրիկ...

Ամբոխը հեկեկում է. տէրտէրը կարդում, տիրացուն ձայնակցում...

Դագաղը դուրս բերին, տարան եկեղեցի, այնտեղից պիտի տանէին դէպի յաւիտենական հանգիստը, ուր էլ երբէք դառնութիւններ, վշտեր ու կսկիծներ չէ տեսնելու. չէ տեսնելու անողորմ, անխիղճ մարդկանց արարքները, ձմրան ու գարնան՝ լաւ ու վատ օրերը... այնտեղ հանգիստ է, այնտեղ խաղաղ է... այստեղ է, որ անդորրութիւն չկայ, այստեղ է՝ որ . . . . . .
խեղճ ճնշուածներ, խեղճ սոված ներ...

Այդ էլ Եղսօի դագաղն էր, որ իր մէջ պարտկել էր տարիների տառապանքի տակ ճնշուած մարմինը։

Որբութեան գիրկը նետուեցին չորս թուլակազմ մարմիններ...

Ձմեռը շարունակում էր իր սաստկութիւնը։

Ս. ՐՕՖՖՕՐ

***

Երանի՜ ես ինչպէս կայծակ
Սուրամ, թռչեմ դէպի վեր,
Անվախ սրտով ու համարձակ
Գրկեմ երկինք եւ աստղեր։

Ես ջերմութիւն կընեռնչեմ
Սառն, անկենդան աստղերին
Եւ զարթնելու երգ կրնչեմ
Դիակնացած մեր երկրին...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՊՕԼԵԱՐՆԻ

I

Դէպի առաջ

Օդի անյատակ ալիքների վրայ տարուբերուելով լողում էր կապտագոյն երկրագունդը անսահմանութեան մէջ։

Լողում էր դէպի հեռաւոր լուսաճաճանչ աստղը, տատանուելով ներքին ոյժից։

Արևի ջերմ համբոյրները չէն կարողանում հալեցնել տևական սառոյցները, չէն կարողանում վանել դառնաշունչ ձմեռը ձիւնաբեր փոթորիկներով, խայթիչ ցրտերով, և օդի թափանցիկ ալիքների վրայով լողում էր կապտագոյն երկրագունդը դէպի անկայուն փայլող աստղը։

Նա այլափոխում էր գոյները և անչափ հրապուրիչ, անչափ գեղեցիկ էր։

Նա խոստանում էր և՛ նոր լոյս, և՛ ջերմ ճառագայթներ։

Իսկ մշտական սառոյցները, ձիւնաբեր ձմեռը և սարսուռ ազդող ցուրտը, առաջուայ նման ինչպէս արատ մնում էին երկրի վրայ, որպէս հիւանդութիւն, որպէս մշտնջենական պատիժ։

Իզուր էր տալի արևը իր ամբողջ սէրը, իր ամբողջ կիրքը ինքնահաճ երկրագնդին։

Նա լողում էր միշտ առաջ անսահմանութեան մէջ, ընդունելով արևի տաք համբոյրներն որպէս հզօր իշխողը՝ տուրքը իր հպատակներից։

Միշտ անբաւարար, միշտ որոնող լողում էր երկրագունդը։

Մարդիկ կորչում էին ցրտից, բայց կորչելով հաւատում էին, որ երկրագունդը կ'հասնի նոր, ջերմ արևին։

Մարդիկ դողում էին ցրտից և կորչում, երկրագունդը լողում էր...

Անցնում են դարեր, փոխւում են մարդիկ։

Բայց հաւատը անսահման է, ինչպէս կեանքը, հզօր՝ ինչպէս կեանքը...

Հեռաւոր աստղը փայլում էր երփներանգ, հրապուրում և քաղցր ժպտում խորհրդաւոր, դիւրաթեք ժպիտով։

Հեռաւոր ամպից, դէպի ուր տարաւ ինձ յանդուգն միտքը, նայում էի ես կապտագոյն երկրագնդի սաւառնելուն դէպի հեռաւոր աստղը, լաղդ, մշտատև ամառ և գեղեցկութիւն ձեռք բերելու համար...

Ինձ հետ միասին մեղմիկ ամպի վրայ պարկած էր սրտնեղած սատանան և բարձր յօրանջելով ասում.

—Ձանձրալի է, յողնել եմ ծիծաղելուց։ Այս գնդաձև յիմարը չի էլ տեսնում, որ բոլոր գեղեցիկ աստղերն էլ լողում են անսահմանութեան մէջ...

Ես ցնցուեցի և լուռ տխրութեամբ նայում էի գեղեցիկ և հպարտ լողացող երկրագնդին...

Բայց մի վայրկեանից յետոյ իմ մէջ բռնկեց մի պայծառ, այրող միտք.

—Նա պէտք է լողայ բոլոր աստղերից աբաղ, որովհետև հաւատը զօրաւոր է նորանում։

II

Կեանքի հեքիաթը

Իմ պարտիզում վարդ է ծաղկում գեղեցիկ...

Դալար խոտի և խայտաբղէտ ծաղիկների հովտի մէջ—վարդ ցանկալի, քնքոյշ, սիրելի։

Վարդ գեղեցիկ...

Գունատ, ճկուն ոստի վրայ պսակ ծաղկում. երկնագոյն, հեռուից միայն երկնագոյն։

Մօտից բոլոր երփները՝ մուգ կապոյտից մինչև գունատ երկնագոյն. իսկ թերթիկների ափերը առաւել գունատ, քնքոյշ, թափանցիկ...

Նրանք սպիտակ են ինչպէս վաղորդեան ձիւն, ինչպէս շուշանի հոտաւէտ պսակը։

Վարդիս մէջ քաղցրահամբոյր երփների ձայնաշար, վարդիս մէջն է գեղեցկութեան ամբողջ հրապոյրը, նիրհող, մեղմ ու լռիկ.

Անբմբռնելի բուրմունքով գրաւում է վարդը դէպ իրան և հրապուրում, և յուզում, և զրգռում երկչոտ ժպտով։

Վաղ գարնանն է ծաղկում միայն իմ վարդը չքնաղ և թառամում առաջին տաք օրը։

Մտախոհ երերալով, նա ժպտում է միայն տխուր ժպիտով, ծիծաղում միայն աչքերով, իսկ խօսում միայն հառաչանքով, շշնջում միայն երևակայութեամբ։

Նորան չեն սիրում այգիներիս բազմերանգ ծաղիկները և ատում են խոտերը։

Ի՞նչպիսի զայրոյթով մօտենում են նորան օձի նման, որպիսի հրճուանքով կ'ցանկային խեղդել նորան։

Միմիայն ես եմ սիրում իմ վարդը լռիկ, սիրում եմ համբ, վշտագին սիրով.

Ներշնչելով յուզող անուշահոտութիւնը ամբողջ կրծքով, յոգնածութեան և անզօրութեան չափ, հրճուում եմ նորանով, համբուրում միայն գիտակցութեամբ...

Սակայն ինչն եմ սիրում ես, խորհրդաւոր վարդի մէջ— չ'գիտեմ...

Գուցէ նորա մէջ են միաւորուում երկինքն ու երկիրը վայրկենական համբոյրով. գուցէ գնահատելի է նա ինձ համար ինչպէս հանելուկ...

Ինչի համար եմ սիրում վարդը, չը գիտեմ...

Ամենքը, ում թոյլ եմ տալիս զբօսնելու այգուս մէջ, անցնում են վարդիս մօտով։

Հրճուելով բազմերանգ ծաղիկներով, ներշնչելով պարտիզի ուժեղ բուրմունքը, ոչ ոք չէ թեքւում դէպի նա, ոչ ոք չէ զգում բուրմունքը վարդիս։

Երբ անխօս, վախկոտ ժպիտով ընքոյշ վարդիս մօտեցնում եմ մարդկանց, ամենքը ուսերը վեր են քաշում և ականջիս հեգնօրէն շշնջում։

— Այո, խաբէութեան վարդ է դա... Իզուր չէ ծածկուած անթիւ գոյներով և նրա անըմբռնելի բուրմունքը յուզում մարդկանց... շտապէր, կոխ տուր նորան, խաբէութեան վարդ է դա...

Խաբէութիւնը բուն է դրել դորա մէջ և դա քեզ կ'թունաւորէ...

Ոչ, իմ վարդը սքանչելի է, նորա մէջ է երջանկութեան ցնորքը, նորա մէջ է զմայլութեան ուրուականը. ես կեանքի հեքիաթ եմ կոչում նորան։

Իմ պարտիզում ծաղկում է վարդը աղօտ, խարուսիկ, ինչպէս երկինք, փոփոխական որպէս ծով, թունաւոր, բայց սքանչելի...

Ա՛խ, որքան սիրում եմ իմ վարդը։

Թարգմ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆ

ՂՈՇԱ-ՎԱՆՔ

«Ինչպէս որ էր այնպէս
էլ պէտք է կանգնել»։

—

Սուրբ Մարկոսի—Վենետկի փառքի տաճարի աշտարակի կործանուելուց յետոյ, իտալական ժողովրդի ներկայացուցիչները ազգային ժողովում միաբերան վճռեցին, թէ կործանուած աշտարակը «Ինչպէս որ էր, այնպէս էլ պէտք է կանգնել»։ Եւ կանգնեցին, առանց խնայելու ժողովրդի աղքատիկ գրպանից կորզուած հարկերը։ Եւ դարձեալ մի տասնեակ դար, զուցէ և աւելի սուրբ Մարկոսի աշտարակը պիտի հրապուրէ աշխարհին, պիտ ձգէ իրեն այցի, գնալ երկրպագելու ճարտարապետութեան կոթողը, գիտութեան և գեղարուեստի հրաշալիքը, մեծագործութեան պատկերը։

Պարզ է, թէ ինչի չը խնայեց Իտալիայի նման աղքատ ժողովրդի ստակները նրա ազգային ժողովը։ Իտալացին, պահպանելով իւր դարևոր արհեստագէտների արտադրութիւնները, ուզում է դրանցով կրթել և խրախուսել իւր մանուկ դասակարգը, ձգտում է կենդանի օրինակներով ներգործել ժատաղ սրտերի վրայ, որպէս զի սրանք զարգանան մտքով, ճաշակով, ճարտարագործութեամբ և համբերատարութեամբ, որպէս զի իւր դարևոր օրինակելի դիրքը կարողանայ պահպանել գիտական և գեղարուեստական աշխարհում։ Որպէս զի իւր զաւակները կրթուին ու զարգանան կուլտուրական բարձր հակումներով և կուլ չը գնան, կամ չստրկանան։ Որպէս զի Վենետկի փողոցները թափառող աշակերտը վեհ հակումներով սնուի և չստորանայ։

Եւրոպական քաղաքները, թանգարաններ և պալատներ այցելողը չի կարող նկատած չը լինել, թէ ամեն մի երկրում որքան ջանք ու խնամք են գործ դրել, որպէս զի իրենց կուլտուրական զարգացման պատմութիւնը կարողանան կենդանի ապացոյցներով դրոշմել իրենց մանուկների սրտի տախտակներին և ուղեղի ծալքերի մէջ, այս կենդանի օրինակներով են անցեալ փորձերից

օգտուել և աւելի հսկայական քայլերով առաջ գնացել դարէ դար և տարէցտարի։

Փարիզում «Կլունի» միւզէյում այցելուին ցոյց են տալիս Հռոմի կեսարների շրջանում Քրիստոսից առաջ շինուած որմերի հետքերը, որի քարը, կիրը, աղիւսը հետաքրքրութեան նիւթ են դարձել։ Այդպէս շարունակաբար այցելուն տեսնում է այն ժամանակուայ կուլտուրային յաջորդող ամեն մի շէնք, կոփուածք, արձաններ միջնադարեան-քրիստոնէական և ուրիշ կերտուածքներ։ Ձեռագործների, կարասիների, խեցեղէնի և յաղճապակի անօթների դարէդար զարգացման պատմութիւն մի ժամուայ շրջագայութեամբ կարող էք տեսնել և այնպիսի տպաւորութեամբ դուրս գալ, որ այդ գաղափարը ստանալու համար կարևոր էր ունենալ մի հմուտ ուսուցչի տարեկան դասը և քառասուն հատորի ընթերցում։

Պապերը, հին Հռոմի աւերակները ամբողջ հազար տարի պեղելով, նրանց տակը ծածկուած գանձը հրապարակ հանելով, Վատիկանի, Նէապոլիի, Ֆիորէնցիայի միւզէօնները կազմակերպելով կարողացան Իտալիան վերածնութեան հասցնել։ Վանդալների քանդած Հռոմի աւերակների տակ թաղուած գանձեր ծնեցրին տաղանդներ և հանճարներ՝ Միքէլ-Անջելոյին, Ռաֆայէլին, Դանտէին ու Բոքքաչիոյին, որոնք իրենց հետևորդներով ստեղծեցին գեղարուեստի նորանոր շկոլաներ։ Հռոմը չէր կարող ունենալ Մովսիսի և Յիսուսի հռչակաւոր արձանները, եթէ Հռոմի պեղումներից դտնուած չը լինէին Ֆիդիասի և նրա ժամանակակիցների անզուգական գործերը։

Ինչպէս պեղումները զարգացրին ժողովրդի միտքը, այդպէս էլ զարգացումը ստիպեց գիտակից գործիչներին դասաւորել և կարգաւորել գեղարուեստական բոլոր կերտուածքները, նրանց բաժանել դարէդար, շրջանէ շրջան, որոնց պատմութիւնն ու քննադատութիւնը նիւթ դարձաւ դասաւանդութեան։ Այդ կենդանի օրինակները և կենդանի դասախօսութիւնները պարզեցին միտքը, սրեցին գիտակցութիւնը, նրբացրին ճաշակը և ծնունդ առան դարէդար ձիրքերը, տաղանդներն ու հանճարներ։

Իսկ մենք ի՞նչ ենք արել և ի՞նչ ենք անում։

Մեր պապերը Ճինգիզ-խաների, Ալփասլանների և Լէնկթեմուրների բռնութիւնները չը կարողանալով տանել, թողին իրենց ծննդավայրը, սրբութիւնները, հայրենի օջախը և ցրուեցան Պոնտոսի ափերով Փոքր Ասիա, Կ. Պոլիս, Թրակիա, Խրիմ, Ուկրայնա, Ռումանիա, Տրանսիլվանիա և մինչև Լեհաստան և իրենց

հետ որոշ կուլտուրա տանելով, ոչ միայն գրկաբաց ընդունուեցան, այլ առանձնաշնորհների էլ արժանացան։

Մնացորդները—լեռնաբնակ, ճորաբնակ ժողովրդի տականքը, լցուեց աստիճանաբար աւերակ քաղաքները և գեղարուեստն սկսեց դարէդար յետադիմել։ Այլ ևս Անիի, Զուղայի թանկագին նուրբ թաւիշները, դիպակները, մոռաններն ու աթլասները, ծաղկուն գործուածքների գործարանները դադարեցին, նրանց տեղը բռնեցին խամ կտաւի, շալի, աբայի գործարանները և չթի դաճարանները, որոնք իրենց գոյութիւնը պահպանեցին մինչև 1875 թուականը և մեքենական աշխարհի արտադրութիւնների դէմ չը կարողանալով մրցել՝ աստիճանաբար—1840 թուականներից ըսկսած ընկան, մինչև բոլորովին փակուեցան։ Ոչ միայն թիւրքահայաստանի, Ատրպատականի, այլ մինչև անգամ Կովկասի ամեն մի ետ ընկած քաղաքում կարելի է գտնել հարիւրաւոր փոշոտուած սաղերքներ, մասրաններ, մաքուկներ, որոնց տեսքը հառաչանքներ են խլում պառաւ տանտիկիններին սրտից։

Այսպէս էլ ընկած ոսկերչութիւնը, ապակեգործութիւնը, բրուտները, յաղճապակեայ գործարանները, մէկը միւսի յետևից տեղի տալով կոպիտ կերտուածքների։ Հահարբաս, Սուլթան Սէլիմվէսը Հայաստանում մնացած վերջին արհեստաւորներին, գորգագործներին, դիպակագործներին, ոսկերիչներին և ճարտարապետներին հազարներով հաւաքեցին, վարեցին իրենց մայրաքաղաքները զարդարելու։

Ճարտարապետութիւնն էլ աստիճանաբար այնպէս ընկաւ մեր երկրում, որ ոչ թէ հիմքից մի գեղարուեստական գործ կերտելու ընդունակ մարդիկ չէին մնացել, այլ եղածների կարկատանները վերանորոգողներն էլ այնքան տգէտ և ապիկար արարածներ են եղել, որ կոպտութեամբ փչացրել են սքանչելի կերտուածքները։ Շիրակի Ուղուղլի, Շիրակաւան և ուրիշ գիւղեր այցելողի աչքից արտասուք է թափում, երբ նկատում է, թէ բիրտ կարկատողները ինչպէս այլանդակել են սքանչելիքները։

Հայ ճարտարապետները գնում են Սեբաստիա, Ամասիա և կ. Պոլիս սուլթանների համար պալատներ, մզկիթներ, շիրիմներ, գրադարաններ և մէդրէսէներ կերտում, որոնցով ապշեցնում են գեղարուեստական աշխարհը, իսկ երկրում մի հասկացող որմնադիր խնկով մոմով չեն ճարում։ Սուլդան Մէհմէդ-Ֆաթիհի, Սուլթան Բայազիտի, Սուլթան Սէլիմի, Սուլթան Սուլէյմանի կերտել տուած բոլոր մզկիթները կանգնել են հայ ճարտարապետները XV-րդ և XVI-րդ դարում։ Յաջորդաբար XVII-րդ դարում կառուցուած Նուրի Օսմանիէ մզկիթը, իւր սքանչելի ճարտարա-

պետութեամբ և քանդակներով սքանչացնում է գեղարուեստաէրներին, բայց մեր երկրում վանքերն ու տաճարները կարկատելու հանդէս են գալիս համբակները։

Բագրատունիները ազգային հին ճարտարապետութիւնը զարգացնելով, հասցրին XI-րդ դարում գեղարուեստական ինքնուրոյն այնպիսի բարձրութեան, որը՝ այդ շրջանում՝ մրցակիցը չունէր ոչ միայն Եւրոպայում՝ Հռոմում ու Յունաստանում, այլ ամբողջ աշխարհում։ Եւ այս կատարելութեան հասած ճարտարապետութիւնը ոչ միայն իսպառ ընկաւ, այլ մինչև անգամ դրանց աւերակները խուզարկուներ չունեցան, պեղումներ չը. կատարուեցին և իսպառ մոռացութեան տրուեցան։

XIX-րդ դարում Վենետիկի միաբանութեան, Կէստների և ուրիշ ճանապարհորդների Անիի և Շիրակի մասին աշխատութիւնները ոչ միայն ճշգրտութիւնից անչափ հեռու են, իրական դանձի մի հազարերորդը չեն պարփակում իրենց մէջ, հեռու են նոյնիսկ իսկութեան հեռանկարը լինելուց։ Մի միայն տոկուն աշխատանքը—Մառի պեղումները, ճարտարապետ Թ. Թորոմանեանի ընդօրինակութիւնները և վերակազմութիւնները (restauration) ցոյց դրին գիտական աշխարհի առաջ այն սքանչելիքները, որոնք մնացել են ինքնուրոյն հայ-ճարտարապետութեան հետքերից, որոնք արտահանեցին իսկական հայ ճարտարապետութեան այնպիսի տիպարներ, որոնք իրենց նախորդն ու հետևողը չեն ունեցել ընդհանուր ճարտարագիտութեան մէջ։

Շիրակի ճարտարապետական կերտուածքների մէջ մի սքանչելի դիրք է բռնում Ղոշա-վանքը, կամ իսկապէս Հռոմոսի վանքը, որ իւր աննման ճարտարագործութեամբ ոչ միայն հայերիս համար թանկագին գոհար է կազմում, այլ համաշխարհային ճարտարապետութեան մէջ անգամ անզուգական է իւր ոճով (style) և սքանչելի քանդակներով։

Ամբողջ աշխարհում չէք կարող գտնել մի այնպիսի գմբէթ, այն էլ ութ մեծ քարերից կազմած, որը հազար տարուց աւելի է, որ կանգնած է վանքի տաճարի գաւթի կենտրոնական, չորս սիւների գլխին, շրջապատուած ութ մասից կազմուած քարածածկ գմբէթներով, որոնց մէկի առաստաղի ծաղկենկարը տալիս ենք մեր ընթերցողներին [1]։

Այս քանդակների նկարի ընթերցողի աչքերին ու սրտին թողած ապաւորութիւնը երբէք չեն կարող թողնել որևէ նկարագրութեան բառերը։ Նախադասութիւնները այդ քանդակների նրբութիւններն ու ոլորածուները չեն կարող արտայայտել։ Զննե-

[1]) Կլիշէն Պ. Բուրգից ուշանալով՝ կտանք հետևեալ համարում։ Խմբ.

ցէք, զննեցէք, ընթերցողներ, նրանք ծով խօսքերով կը ներկայանան ձեր աչքերին ու սրտերին։

Զննեցէք կենտրոնական խաչը, որ չորսի է բաժանում առաստաղը, տեսէք նրա խաչերի դարձուածքները, դիտեցէք նրա խորշերը։ Դրանց բնապատկերը քարի վրայ է արձանագրուած, այնտեղ է փորագրուած, բայց ոչ մուրճով, այլ գրչով, ասեղով։ Տեսէք, թէ որքան տոկուն համբերութեամբ այդ բոլոր երևակայութեան ծրագիրները շարէշար դասաւորուել են քարերի վրայ և ինչքան նրբութեամբ։

Չորս մասերի մէջ չորս բոլորակ է փորագրել պղնձէ ու յաղճապակեայ սկաւառակների նման, որոնց շրջանակները այնպիսի քանդակներով է զարդարել, որ պղնձէզործը կը դժուարանար սկաւառակների շուրջը այդպիսի նրբին խաղերով նկարել։ Այդ չորս սկաւառակներից և ոչ մէկը միւսին նման է, չորսն էլ իրարից տարբեր են իրենց քանդակներով։ Զննեցէք, մտէք նկարների խորքերը և պիտի նկատէք, որ համանման գծեր չէին սիրում մեր նրբաճաշակ պապերը։

Դեռ աւելին։ Այս առաստաղի նման վեց առաստաղներ ունի գաւիթը աջակողմեան և ձախակողմեան երկարութեամբ, արևելքից արևմուտք ձգուած, և այդ վեց առաստաղից և ոչ մէկը իրար նման են։ Եթէ հնար ունենայի միւսների նկարները ձեռք բերել, նրանց քննելով պիտի աղաղակէիք, որ դեկադանսը հազար տարի առաջ մեր պապերի գանգերը խիստ շատ է յոգնեցրել։

Թէ տաճարի ներսն ու դուրսը, թէ արտաքին գաւիթը, թէ խորհրդարանը և նրան յարակից սրահները գեղարուեստի թանգարան է—մուզէյ է։ Խորհրդարանի ճակատին շարուած խաչքարերը մի մի չքնաղ կերտուածքեր են իրենց նրբին և ոլորածոյ քանդակներով։ Այնքան խաչարձաններէ մէջ, ոչմի կրկնուած գիծ չէք կարող գտնել, այնքան տարբերուում են մէկը միւսից։ Ամեն մի քարի վրայ արուեստաւորների մտքի, ձեռքի և ճաշակի ուրոյն դրոշմը կը գտնէ հետաքրքիր և մանրաղնին դիտողը։

Հազար տարի առաջ հողին յանձնուած հանճարեղ ճիւնների ուրուականները, նրանց թողած ձեռակերտների ծալքերից, խօսում են այցելուի հետ, ապրում են իրենց արտադրութիւնների հետ և հապճեպ անցնողի աչքերը գրաւում, ստիպում են կանգնելու և հրապուրուելու։

Հապա խորհրդարանի գոյնզգոյն քարերից հիւսուած մոզայիկ տափարակ առաստաղները բազմազան նկարներով, կամարները բազմաձև խորշերով ու եզրներով, միակտուր սիւները շքեղ խոյակներով և խարիսխներով։ Լուսամուտներն իրենց քանդակա-

ւոր շրջանակներով և քարից հիւսուած վանդակներով։ Ընդարձակ սրահի յատակում զետեղուած բազմաթիւ գերեզմանաքարերը, որոնց իւրաքանչիւրի տակ թաղուած են ոսկեղինիկ դարի ժրաջան գլուխները և հանճարեղ ուղեղները, իրենց նրբին քանդակներով և արձանագրութիւններով այնպէս են աչքի ընկնում, որ այցելուն ակամայ քայլերը զսպում և զգուշութեամբ է անցնում նրանց մօտից։

Խորհրդարանից դէպի արևմուտ և դէպի արևելք սրահները, իրենց որմնաքանդակներով, շքեղ որմնասիւներով, իրար հիւսուած կամարանկարներով, նրբաճաշակ շրջանակներով, որոնք արևի լոյսին ճանապարհ են տալիս ոսկեպարար շողերով ցոլացնելու այն աքանչելի կերտուածքները, որոնք բիրտ ձեռքերի, անհոգ սրտերի, անխիղճ վերակացուների ձեռքին մատնուած՝ փոշոտուել ու մամռոտուել են, փշրուել ու ջարդուել են, անխնամ թողնուած քայքայուել ու թափթփուել են, որ կարծես ամբողջ շինութիւնը ողբում է ու ակամայ մարդու կիրքն է բորբոքում, զայրոյթն է բարձրացնում, ջղերն է ցնցում։

Այս աքանչելիքների թանգարանը, որ երեք դար «Խաթուն-Օղլուներին» որպէս մարագ էր ծառայել, ախոռի փոխարէն էին գործածուել և միայն թանզիմաթի 1834 թ. Խաթթի-Շէրիֆից յետոյ Բարութչիբաշիների թախանձանքով և պատրիարքարանի տրքնութիւնով ազատուել էր, վանքի փոխարկուել, վերջին 70 տարուայ ընթացքում հայ տգէտ վանականների ձեռքին դարձեալ յարդանոցի և խոտանոցի էր յատկացուել։

Ղոշա-վանքը Անիի արքունիքի համար ճիշտ այն դերն է կատարել, ինչ որ Շէնբրունը Պրուսիայի համար։ Բայց այդ շքեղ կառուցուածքը չեն կարողացել ըստ արժանւոյն գնահատել մեր նրբաճաշակ պապերի աւերակներն աւելացնող թոռները։ Այն սրբարանը, որի մէջ թաղուած են մեր մտքի հանճարները, ժողովրդի առաջնորդներն ու իշխանները, այնտեղ, որտեղ խորհրդի են ժողովել երկրի հոգևոր և մարմնաւոր վարիչները, որտեղ տնօրինել է ժողովրդի գուցէ և ամբողջ ազգի բաղդը, որտեղ ընդունուել են տար աշխարհից այցելող դեսպաններին, որտեղ տքնել են իրենց կերտուածքներով պարուրել այդ օտարականների աչքերն ու սրտերը, յարգանքի, պատկառանքի ու ակնածութեան արժանանալ, այդ պարծանքը եօթանասունամեայ ազատութիւնից յետոյ դարձեալ մնացել է երեք հարիւրամեայ ստրկութեան մէջ, մեր տգէտ և անզգայ վարիչների շնորհիւ։

Ղոշա-վանքը ծաղկած Անիի շրջանում այնպիսի պաշտամունքի առարկայ է եղել, ինչպիսին ս. Մարկոսի տաճարը Վենետկի

գոժերի համար։ Ճշմարիտ է, Ղոշա-վանքը մարմարիոնով, պորֆիւրով, ոսկով ու արծաթով չի եղել պատած, ինչպէս գոռոզ Վենետկի գոժերը ամբողջ Միջերկրականի ափերը կողոպտելով զարդարել էին իրենց երկրպագութեան վայրը, բայց Անիի ճարտարապետները Ղոշա-վանքը ներքուստ թէ արտաքուստ այնպիսի սրբատաշ, գոյնզգոյն քարերով էին կոփել, այնպիսի նազելի հարսի նման սիդնիկներով զարդարել, այնպիսի նրբին ու քնքոյշ քանդակներով և որմանկարներով էին զուգել, որ այդ հրաշալիք կերտողները, երբէք օտար աշխարհի ոսկու ու գոհարի հետ կշռով չէին փոխիլ իրենց նախշած կարծր ու փափուկ քարերը։

Ո՛չ միայն իւր ժամանակին արժանաւորապէս գնահատուած է եղել Ղոշա-վանքի ամեն մի քարը, ամեն մի քանդակը, այլ սրանից քառասուն տարի առաջ Անգլիացի ճանապարհորդները, գաւթի գմբէթի ութը ահաւոր քարերի համար առաջարկել են նրանց կշռով ոսկի և Յովհաննէս եպիսկոպոս Ռշտունին ցանկացել է ծախել, եթէ Կ. Պոլսից Բարութչի-բաշիներից չստանար խիստ հրամանների հետ՝ ծանր յանդիմանութիւններ։

Այս գեղարուեստական տաճարը, որով կարող էր պարծիլ նոյն իսկ գեղեցիկն Իտալիա, որը կարող էր անզուգական զարդ լինել նոյն իսկ Պարիզի Կլունի և Տրօկադէրօի թանգարանների համար, որը կարող էր Բրիտանական Միւզէօնի (British-museum) հնութիւնների ժողովածուի մէջ թագուհու դերն ստանձնել, անխիղճ ձեռքերի, բիրտ թաթերի և անխնամ սրտերի է մատնուած։

Ղոշա-վանքը հազար տարին անց է կացրել առանց հիմնական վերանորոգութեան, նոյն իսկ թեթև կարկատանի ենթարկուելու։

Ղոշա-Վանքը այն հնութիւններից չէ, որից կարողանանք ձեռք քաշել, ինչպէս յաւիտենական մոռացութեան են տրուել անթիւ աւերակներ։ Նա Բագրատունիների կուլտուրայի կենդանի պատմութիւնն է, որ աւանդել է, աւանդում է, աւանդելու է թոռներին ու ծուռներին իրենց հանճարեղ պապերի ճարտարապետական ձիրքերն ու տաղանդները։ Այդ կանգուն տաճարը այսօր անհրաժեշտ կարիք ունի վերանորոգութեան, որպէս զի դարձեալ դարէդար կանգնի և խօսէ ապագայ սերնդին իւր կերտող ճարտարապետների անցեալը և ոգևորելով մատաղ սերնդին նորանոր Տրդատ-ճարտարապետներ ծնեցնէ։

Բաւական է որքան ստրուկ մնաց Ղոշա-վանքը «Խաթուն-Օղլիների» և տգէտ-վանականների ձեռքին, նրան պէտք է զարդարել գեղեցիկ հարսի նման և այնտեղ կուտակել Շիրակի այլ և այլ մասերից հաւաքուած հնութիւնները։ Անհրաժեշտ է, վերանորոգելուց յետոյ, վանքը վերածել մի թանգարանի և հազարա-

ւոր հնութիւններ, որոնք յաւիտենական ջնջման են ենթարկուելու, օր առաջ կուտակել այդ թանգարանում։ Եօթը դարի ընթացքում ծննդավայրից փախչող պապերը որքան որ հնարաւորութիւն ունեցել են քաշով թեթև և գնով ծանր առարկաները տարել են։ Եօթը դար շարունակ Շիրակը աւերող ու կողոպտողները դարձեալ այդ կողոպուտները կրել են օտար աշխարհ, այնպէս որ լերկ քարերն են թողել երկրում, դետնի տակ թաղուած և շինուածքների փլատակները։

Մինչև անգամ շինուածքներն էլ հանգիստ չեն թողել Ղարախանօղլիները իրենց ապարանքը շինելու համար, XVII-րդ դարում, այն մեծամեծ տները որ ներկայիս կանգնած է դեռ կարուց բերդամասում, Անիի պալատներն ու տաճարները քանդել տալով, սրբատաշ քարերը փոխադրել են Կարս։ XIX-րդ դարում Կարսում Հաջի-Աբդուլլահի, Կուրօ-զադէի, Մօլլ-աղայի և Մուրաջայու շինել տուած տների որմերը, հիւսուել են անիի աւերակների քանդուցքուց բերուած որբատաշ քարերով։

Բայց որքան էլ տարած, ցրուած ջարդած ու փշրուած լինեն, Շիրակի ճարտարապետական կերտուածքներն այնպիսի ծով են կազմում, որ չեն սպառել և նրանց տակ թաղուածները դարձեալ մի մի անգին մարգարիտներ են գիտական աշխարհի և մեր իսկ երկրի համար։

Ահա այս մարգարիտները հաւաքելու, դասաւորելու և պահպանելու համար, միակ և անզուգական թանգարանին կարող է ծառայել Ղոշա-վանքի խորհրդարանը և նրա շրջապատի սրահներն ու սենեակները, գաւիթներն ու անցքերը, որոնք պատրաստի միւզէօն են կազմում ինքնըստինքեան իրենց կազմուածքով։

Անհրաժեշտ է միայն գլուխ քաշել, մաքրել և որ գլխաւորն է վերանորոգել զանազան քանդուած և խարխլած մասերը։ Այս նորոգութիւնը անհրաժեշտ և անյետաձգելի պահանջ է, քանի որ կործանուելու վտանգ է սպառնում վանքին։

Մի այսպիսի անզուգական գանձարանի պահպանութեան համար անհրաժեշտ է, որ ձեռք կառկառեն մեր հարուստները, որպէսզի յաւիտենական անհետացումից փրկեն այդ գեղարուեստական կերտուածքը, որով ոչ միայն կը փրկեն կործանումից Ղոշա-վանքը, այլ հնարաւորութիւն կը տան Շիրակի այլ և այլ գիւղերից ու աւերակներից գտնուելիք իրերը այդտեղ փոխադրել և կազմել մի հայակական ճարտարապետական, քանդակագործական գեղարուեստի թանգարան։

Բիչ անապարծութեան և ոչ էլ ազգայնական նեղ հայեացք-

ներից դրդուած պէտք է ձեռնամուխ լինել այս վերանորոգութեան, այլ սոսկ գիտական նպատակով։ Հանրամարդկային ճարտարապետութեան մէջ հայկական ճարտարապետութեան զարգացման և հասած կատարելութեան որոշ մարմնացած գաղափարը ցոյց դնելու համար, անհրաժեշտ է այդ վանքերի թագուհին անաղարտ պահպանել։

Մեր մատաղ սերնդին կուլտուրապէս բարձրացնելու, միտքը կրթելու, երևակայութեան թռիչքները լայնացնելու համար, անհրաժեշտ է նրան Ղոշա-վանքի վրայ դրօշմուած մեր պապերի կատարելագործած և ապա կորցրած կուլտուրայի հետ շօշափելի կառուցուածքների կանգուն օրինակներ տալ։

Այս նպատակի վսեմութիւնը աչքի առաջ ունենալով, դիմում ենք հայ հասարակութեան և առաջարկում, միջոցներ ձեռք առնել և նոյն իսկ այս տարի սկսել այդ վերանորոգութիւնը, քանի որ վանքին սպառնում է կործանում։

Ձեռնհաս ճարտարապետների և մասնագէտների կարծիքով, այդ վերանորոգութեան համար կարիք կայ ոչ աւելի քան 7000 ռուբլու, որով ոչ միայն կարելի է բոլոր փլուածքները և խարխլածները վերակազմել, այլ հնարաւոր է պարիսպներն էլ կարկատել, մաքրել ներքին մասը և յարմարեցնել թանգարանի։

Յոյս ունենք, թէ հայ հասարակութեան գիտակից և զգայուն դասը անտարբեր չը պիտի մնայ և անմիջապէս միջոցների պիտի դիմէ, որպէսզի մի յանձնախումբ կազմէ, գործին նախաձեռնելու և կարող անձնաւորութիւնների յանձնելու վերանորոգութիւնը։

Վստահ ենք, թէ մեր գիտակցութեան և կարողութեան ներկայացուցիչները չը պիտի զլանան իրենց լուման արժանաւորապէս վերանորոգելուն այդ գեղարուեստի տաճարը, վերափոխելու նրան մի թանգարանի, որը ոչ միայն պիտի ծառայէ շրջակայ ժողովրդի ճաշակի զարգացման և ճարտարապետական հանճարների վերածնման, այլ պիտի գրաւէ բազմաթիւ հետաքննին և խուզարկու ճանապարհորդների, որոնք այդ սեմից ներս մտնելուց յետոյ, դուրս գալիս այլևս չը պիտի կարողանան թքել արժանաւոր կառուցողների անարժան թոռների երեսին, այն պատճառով, որ չեն կարողացել իսկապէս գնահատել իրենց հայրենի ժառանգութեան անփոխարինելի գանձը։

Սրանից երկու տարի առաջ մի իտալացի ճանապարհորդ Ղոշա-վանքի այցելութիւնից և ամենը բան ուսումնասիրելուց յետոյ, դուրս գալիս հառաչեց ու ասաց.

—«Եթէ այս հսկայ գեղարուեստական կոթողը Իտալիայում լինէր, մենք նրան թաւշեայ պահարանների մէջ կը պահպանէինք և կարկատանները ոսկով ու փղոսկրով կը կատարէինք»։

Հայ ժողովրդի գիտակից և ունևոր դաս, ձեզ դիմելով առաջարկում ու ցանկանում ենք, իտալացիների նման կրկնէք, թէ Ղոշա-վանքը «ինչպէս որ էր, այնպէս էլ պիտի կանգնի» ու թանգարան դառնայ հայ գեղարուեստի։

ԱՏՐՊԵՏ

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ

(Կ. Ա. ԼԷՕՆՏԻԵՎԻ)

(Նուէր բազմավաստակ ճարտ. Թ. Թորամանեանին)

Հայկական ճարտարապետութիւնը մինչև այժմ քիչ է զբաղեցրել արուեստի պատմաբաններին։ Ռուսները, չնայելով տեղի մօտաւորութեանը, ուր այդ ամենահետաքրքիր արուեստն յառաջացաւ, չնայելով նրա ազդակցութեանը ռուսական ճարտարապետութեան հետ՝ ոչինչ, կամ համարեա շատ մասնաւոր բան են աւելացրել նրա ուսումնասիրութեանը։ Եթէ որևէ տեղ էլ յիշւում է հայկական ճարտարապետութեան մասին, այն է շատ անգամ շփոթում են վրացականի հետ։

Վրաստանի և Հայաստանի ճարտարապետութեան վերայ առաջին անգամ ուշադրութիւն դարձնող գիտնական Դիւ-Բիւա-դէ Մօնպերեն կանգնած էր բոլորովին ուղիղ հայեցակէտի վերայ, համարելով հայկական ճարտարապետութիւնը նախատիպ վրացականին։ Այդ հայեացքի հակառակորդները, չներկայացնելով լուրջ առարկութիւններ Դիւ բուա-դէ-Մօնպերէի տեսրիայի ուղղութեան դէմ, աւելի շատ հակուած են համարել այդ ճարտարապետութիւնները զուգընթացաբար զարգացած, միևնոյն աղբիւրից, բայց բոլորովին միմեանցից անկախ։ Պրոֆ. Կանդակովը, իւր «Հին վրացական ճարտարապետութիւն» գրքի մէջ, մինչև անգամ բոլորովին մերժում է վրացիների ճարտարապետական սկզբունքների փոխառումը հայկական ոճից։ Նա ասում է։ «Ընդհանրապէս գործածուող «վրաց ճարտարապետութիւն» տերմինը՝ առողջ մտքի ծնունդ է, պարզ հասկանալի, որովհետև ճարտարապետական յիշատակարանները կենդրոնացած են բուն Վրաստանում և ոչ Հայաստա-

նում»։ Բայց պատմութեան և հայկական յուշարձանների սերտ ուսումնասիրութեամբ, այն հայեացքը, թէ Հայերն իրանց ճարտարապետութիւնը ստացել են Վրաստանից,—պիտի բոլորովին թողնել։

Իսկապէս, Վրաստանի և Հայաստանի յուշարձանների մեծագոյն մասը, յառաջացել են ծառայելու այն կարիքներին, որոնք կապ են ունեցել քրիստոնէութեան մուտ գործելու հետ, դորա համար էլ քրիստոնէութիւնն ընդունելու ժամանակը, երկու երկրների համար էլ կարող է ծառայել իբրև յենակէտ ճարտարապետական պատմութեան։

Վրաց Միրիան (Միհրան?) թագաւորը, շնորհիւ ս. Նունէի ջանքերի, քրիստոնէութիւն ընդունում է IV դարի սկզբում և քրիստոնէական կրօնը դառնում է պետական։ Որպէս զի Վրաստանի քրիստոնէութիւն ընդունելու ճիշտ տարեթիւը հաստատենք, դիմենք Բարօնիա պատմաբանի վկայութեանը։ Նա գրում է. «Կոնստանդինի թագաւորութեան 22, Սիլեստրի 14, Քր. ծն. 327 տարին, Իվերիայում սուրբ հաւատը տարածուեց» և այլն. և յետոյ պատմում է ս. Նունէի լուսաւորիչ գործունէութիւնը [1]։ Այն ինչ Հայաստանում քրիստոնէութիւնը տարածւում է Տրդատ Մեծի օրով, որ բարձրացաւ հայոց գահի վերայ 286 թուին։ Տրդատն ինքն ընդունեց քրիստոնէութիւն և նրան արաւ պետական կրօն։ Յետոյ պիտի նկատել, որ հայոց հոգևոր գլխին—կաթուղիկոսին էին ենթարկուած Աղուանից և Վրաց արքեպիսկոպոսները և վերջինս անկախացաւ Հայ եկեղեցուց միայն VI դարում [2]։

Այժմ աշխատենք ուսումնասիրութեան արժանի յուշարձանների շինուելու տարեթուերը որոշել։ Արխազիայի Պիցունցու տաճարը մինչև այժմ համարւում է ամենահին յուշարձանը, որ ծառայում է իբրև նախատիպ վրաց ճարտարապետութեան, իսկ ինքն Արխազիան, հայրենիք Վիր-Բիւզանդական ոճի։ Այդ տաճարն ի պատիւ ս. Սոֆիայի Աստուածային ի-

---

[1]) «Древности восточныя». Трудъ вост. ком. Имп. Мос. Арх. Общест.

[2]) Внутр. быть древн. Арм. Г. Езовъ.

մատուռեան (այդ մակոնուն նա պահպանում էր մինչև XVI դարը) Պրոկոպի վկայութեամբ, նորադարձ աբխազցիների համար շինեց Բիւզանդացոց Յուստինոս I կայսրը 551 թուին։ Բայց թէ շարուածքի (քարերի և աղիւսների անհաւասար կարգեր) և թէ յատակագծի բացառիկ բնոյթով, մեզ հասած Պիցունցու եկեղեցին ամենից շատ մօտ է բիւզանդական XI դարի եկեղեցիներին։ Այս դաթն (տարեթիւ) էլ պիտի ընդունել, իբրև եկեղեցին կառուցանելու ժամանակամիջոց, որն ընդհանրացած կարծիքով, ներկայացնում է վրացական եկեղեցիների նախատիպը։ Այլև պիտի նկատի ունենալ, որ վրաց պատմաբանների ասածներին համաձայն, մինչև անգամ ամենահները և այդ պատճառով աննշան ու ճարտարապետական քիչ հետաքրքրութիւն շարժող յուշարձանները, կառուցուել են X դարից ոչ առաջ։

Այժմ դիմենք Հայաստանի պատմութեան։ Ադաթանգեղոս պատմագիրն ասում է. «Գրիգոր Լուսաւորիչը (IV դար) քրիստոնէութիւն մտցրեց ամբողջ Հայաստան՝ քանդելով կռատունները, շինելով «տաճարներ» ամեն կողմերում,—նահանգներում, քաղաքներում, աւաններում և գիւղերում՝ նշանակելով քահանաների, սարկաւագների և եկեղեցու ուրիշ սպասաւորների անհամար բազմութիւն։ Հայկական եկեղեցիների կառուցուելու սկզբնաւորութեան այս ընդհանուր ցուցմունքից անկախ՝ նրանց մի քանիսի տարեթուերը կարելի է ճշմարտութեամբ ցոյց տալ։ Հայերի դիխաւոր սրբութիւնը—Էջմիածինը հիմնուել է 303 թուին. այս վանքից կէս վերստ արևելահարաւ գտնուում է սուրբ Գայիանէի եկեղեցին (վանքը?). մէկ վերստ արևելք կանգնած է ս. Մարինի կամ Նողակաթի եկեղեցին. առաջինը շինուել է 618 թուին, երկրորդը 630 թուին։ Ծոփաց երկրի Խոդան քաղաքում ս. Գրիգորի որդին շինեց մի մեծ եկեղեցի։ Ս. Մակարի վանքը (Գանձակի նահանգում) հիմնուած է IV դարում։ Վաղարշապատին մօտ, Ներսէս Շինող կաթողիկոսը VII դարում կառոյց տաճար ս. Գրիգորի անունով։ Ընդհանրապէս, եթէ մի կողմ էլ թողնելու լինենք եկեղեցական շինարարութիւնը և դառնանք ճարտարապետու-

թեան այլ ճիւղերին, կտեսնենք Հայաստանի տարածութեան վերայ տիրաւոր բազմութիւն շինութիւնների, ամենախոր հնութեան, այժմ աւերակ դարձած, որոնք հասկացողութիւն են տալիս հայկական հին արուեստի մասին։ Այսպէս օրինակ, Արաքսի մէջ թափուող Ազատ գետի հովտում, եղել են ամենահին յիշատակութիւններն հայերի պատմութեան։ «Այստեղ Քր. ծն. 2000 տարի առաջ Գեղամ թագաւորը քաղաք [1]) շինեց», որն իր աւերակներով այժմ էլ ներկայացնում է գեղեցիկ նմուշներ հայկական արուեստի, այստեղ մինչև այժմ էլ ճանապարհորդի զարմանքը շարժում է ամայի վանքը, որի մեծ մասը ժայռի մէջ է փորած։ Ամբողջ Հայաստանը ծեւած էր գեղեցիկ ճանապարհներով. նրա տրադավաղ, սրընթաց գետերի վերայ, չնայելով ամենամեծ դժուարութիւնների՝ կամուրջներ էր կառուցուած. ամեն նշանաւոր տեղերում բերդեր—ամրոցներ էր կանգնեցրած։ Ագաթանգեղոս պատմագրի խօսքերով, Արտաշատ քաղաքում, Արաքսի վերայ, հինգ կամուրջ էր կապած։

Բացի այս բոլորից, մեր նպատակին կարող է մեծ ծառայութիւն մատուցանել Անի քաղաքի աւերակների ուսումնասիրութիւնը։ Անիի պատմութիւնն սկսւում է V դարից, երբ նա դեռ փոքր ամրոց էր և պատկանում էր Կամսարականներին։ VIII դարում նրանք Անին զիջան Աշոտ Բագրատունուն, որ ամրացրեց նրան և այնտեղ տեղաւորեց իւր գանձատունը և 961 թուին Բագրատունիները իրանց մայրաքաղաք դարձրին։ Շուտով Անին այնպէս ընդարձակուեց, ամրացուեց և զարդարուեց, որ XI դարի սկզբում, ինչպէս ասում են, 100,000 տուն և 1000 եկեղեցի ունէր [2])։ 1124 թ.—1209 թ. ժամանակամիջոցում, վրացիները հինգ անգամ տիրեցին այդ քաղաքին և հաւանական է շատ խնամքով չէին վերաբերում Անիի շինութիւններին։ Ընդհանրապէս այդ քաղաքը ծեռքից ծեռք էր անցնում յոյներին, արաբներին, սելջուկներին և քարթուելներին։ 1239 թուին մոնղոլները, բոլոր բնակիչներին կոտորե-

---

[1]) Внутр. быть древн. Арм. Г. Езовъ.

[2]) «Новыя замѣтки на древн. ист. Кавказа и его обитателей» И. Шопена.

լով՝ քաղաքն աւերեցին։ 1319 թուին դրանց ծեռքի գործը լրացրեց երկրաշարժը։ Եւ չնայելով այդ բոլոր թշուառութիւններին, Անիի աւերակները, որոնք ծածկում են 7 քառակուսի [1]) կիլոմետր տարածութիւն, ներկայացնում են հայկական ճարտարապետութեան կատարեալ մուզէյ։ Անիի նոր մասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ փոքրիկ եկեղեցու պեղումների ժամանակ գտնուել է խաչքար հայկական 401 թուականով։ (952 թուին Ք. յ.)։

X դարից սկսած, Անին դառնում է հայկական կեանքի հոգևոր կեդրոն։ Կաթողիկոսներն իրանց աթոռը փոխադրեցին այստեղ։ Մայրաքաղաքի շուրջը շինուեցին վանքեր, իսկ բուն Անիի մէջ մի քանի մատենադարաններ, որոնց թւում և արքունի մատենադարանը։ Այսպիսով Անիում արդէն X դարում գոյութիւն ունէին մի շարք շինութիւններ, որոնք իրանց գեղարուեստօրէն կառուցմամբ՝ ներկայացնում են հայկական ճարտարապետութեան զարմանալի արտադրութիւններ։ Այդ շրջանից լաւ պահպանուել են և որոշ դաղափար են տալիս հայերի գեղարուեստական ճաշակի բարձր հասկացողութեան մասին X դարում, չորս եկեղեցիներ.—տոհմական փոքրիկ եկեղեցին ս. Գրիգորի անունով. Մայր եկեղեցին Աստուածածնի, ս. Գրիգորի եկեղեցին (6 աբսիդներով) [2]) և Առաքելոց եկեղեցին։ Անկասկած դրանց կանխել են աւելի հին շինութիւններ, որոնցից և մշակուել է ինքնատիպ հայկական ոճը, և որոնք մեզ չեն հասել՝ Անի քաղաքի բազմաթիւ անգամ աւերածութեան ենթակայ լինելու պատճառով։ XII դարում վրացիները հինգ անգամ նուաճել են Անին և այդ պատճառով էլ հաւանական է ենթադրել, որ տիրողների նուաճած ժողովրդի ճարտարապետութեան վերայ դրին իրանց կնիքը։ Իսկապէս հայերի նուաճուելը վրացիներից աննշմարելի է։ «Եթէ հայ և վրացի պատմագիրների վկայութիւնները չլինին, մենք չենք կարող մտածել, թէ

[1]) Յարգելի գիտնականի ենթադրութիւնը ճշտում է նորանոր փաստերով։ Ըստ ճարտ. Թօրամանեանի Անին պարիսպներից դուրս տարածուած է եղել Ղազլիճայից (Բագնայրից) մինչև Ղօշավանք (Հոռոմոս) խիտ արուարձաններով։ Թ.

[2]) Երևի Ապուղամրենց ծ. Թ.

Անին որ և է կախում ունեցել է վրացիներից. ահաւոր քանակութեամբ պահպանուած և թէ մեր պեղումներով գտած արձանագրութիւնների մէջ՝ ասում է պրոֆէսսոր Մառը, չկայ ոչ մի յիշատակութիւն վրաց թագաւորների տիրապետութեան մասին, որպէս Անին տիրողների։ Եթէ երբ և իցէ էլ յիշում է վրաց թագաւորութեան մասին, այն էլ բացառապէս արձանագրութեան գաթի (թուականի) համար է լինում, որից չի կարելի եզրակացնել վրաց տիրապետական նշանակութեան մասին տեղական կեանքում։

Անցնենք այժմ վերջին և շատերի կարծիքով այն ամենաուժեղ ապացոյցին, որ իբր հայկական ճարտարապետութիւնն իր սկզբնաւորութիւնը վերցնում է վրացականից։ Ցոյց են տալիս, որ իբր ուսումնասիրութեան արժանի յուշարձանները գտնւում են Վրաստանում և ոչ Հայաստանում։ Իբրև հակաչարած ապացոյց, թռուցիկ կերպով թուենք այն շէնքերի ցուցակը, որոնք կարող են ծառայել ինչպէս օրինակ հայկական ճարտարապետութեան և որոնք գտնւում են միայն Ռուսական Հայաստանում, Մարմարշէնում, (Երևանի գ.) Էջմիածնում և Անիում բազմաթիւ յիշատակարաններ։ Լիակատար ուշադրութեան արժանի են Մխիթար Գոշի վանքը (Շուշուայ գ). Ապրի վանք (Այրիվանք), ս. Թովմայի Ագուլիսում (Նախիջևանի գ.) Գեղարդայ վանք Արարատի մօտ, Հաղարծնի վանքը (Շուշ.գ) Ալամի վանքը։ Անուանենք եկեղեցիները, Աստուածածնի՝ Բաղնայրում (Ղօշլիճա), Բէշ-Քիլիսա (հինգ սրբոց) Խնծկոնքում, Տասներկու առաքելոց՝ Կարսում, ս. Գրիգորի մայր եկեղեցին Դարաչիչակում, եկեղեցիները՝ Ղօշավանքում (Անի մօտ) Պողոս-Պետրոսի մատուռը՝ Եկեղեցայում և այլն։

Բայց մի կողմ թողնելով մինչև անգամ բոլոր վերը բերած եզրակացութիւնները, ապացուցանելու համար, որ հայկական ճարտարապետութիւնը վրացականից բոլորովին այլ ճանապարհով է յառաջացել իր սկզբնական շրջանից սկսած, նշանաւոր է նկատի ունենալ հետևեալը.

Ճարտարապետական արուեստը չի կարող լինել (յառաջանալ) առանց մարդկային բազմութեան—մասսայի, որոնք սերնդէ

սերունդ իբրև ժառանգութիւն կան արհեստի ձեւակերպութիւնները և իրանց ջանասիրութեամբ դեղարուեստագէտի միտքը կը կենդանացնեն։ Իսկ Վրաստանում, հնադարեան հայ հրապարակախօս Սիմէոնեանցի ասելով, ոչ մի ժամանակ չի եղել, այսպէս անուանուած երրորդ դասակարգ, ազգաբնակութիւնը բաղկացած էր աղնուական հողատէրերից և ճորտերից։ Երրորդ դասակարգը (վաճառականներ և արհեստաւորներ) ոչ միայն Տփխիսում, այլ և միւս քաղաքներում բաղկացած էր հայերից։ Վերոյիշեալին պիտի աւելացնել, որ ներկայիս էլ Կովկասում հմուտ քարտաշներն ու քարի վերայ փորագրողները հայեր են։

Այս պատճառով հայկական ճարտարապետութիւնները պիտի մեզ շահագրգռէ, նախ նրա համար, որովհետև զարգացել է նոյն արմատից, որից մեր՝ ռուսներիս շինարարութիւնը, երկրորդ որ նա իւր ծաղկած ժամանակ, ոճի այնպիսի օրինակներ է տուել, որոնք կարող են բաւարարել ամենախիստ քննադատին անգամ։ Որպէսզի հասկանալի լինի, թէ հայ ճարտարապետներն ինչ ճանապարհներով հասան այս կատարելատիպ օրինակներին, որոնք այժմ մեր զարմանքի առարկան են դարձել, պէտք է մի փոքր կանգ առնել Հայաստանի պատմութեան վերայ և ընդհանուր գծերով նշանակել այն ուղին, որով շարունակուել է հայ ճարտարապետութիւնը։ Վ. Բ.

(Վերջը միւս անգամ)

ՄՈՒՐԱՑԱՆ †

1854—1908

Մենք Հայերս սովոր ենք մեր արդիւնաւոր անձինքը իրենց մահէն վերջը փնտռել։ Այս ակնյայտնի իրողութիւնը ապացուցանելու համար հարկ չկայ անցեալը պրպտել. ահա նոր օրինակ մը —Մուրացանը։ Կենդանութեան ատեն անյայտ և թաքուն մնաց և չճանչցուեցաւ, որով և չգնահատուեցաւ իւր ոգւով չափ սիրած հայ ազգէն, հայ ժողովրդէն։ Իւր 35 ամեայ գրական բեղմնաւոր գործունէութեամբ հանդերձ երախտագիտական որևէ նշան մը կամ համակրանաց արտայայտիչ փոքրիկ ցոյց մը չեղաւ ազգին կողմանէ. եթէ մեծ դժուարութեանց և աշխատեցուցիչ պարագաներու կապուած էր իւր գրոց տպագրութեան ձեռնամուխ ըլլալը, բայց կարծենք 25 ամեայ յոբելեան հանդէս մը կարելի էր առանց շատ յոգնելու կատարել՝ ի պատիւ Մուրացանի արդիւնաւոր գրչին։ Այս նշանաւոր վիպագրին հանդէպ Ռուսահայոց բռնած ընթացքը առեղծուած մըն է, որուն զոհացուցիչ մեկնութիւնն ու լուծումը չեն տար այն պատճառաբանութիւնները, որ ցայժմ յառաջ բերուեցան։ Գոնէ այսուհետև տանք անոր իւր արժանավայել յարգն ու կարգը և այն բարձն ու գահը, ուր բազմելու լիուլի իրաւունք ունի, իբրև անուանի հայ վիպասան և թատերագիր։

Մուրացան ծածկանուան տակ պահուըտող անձնաւորութեան բուն անունն է Գրիգոր Աստուածատուրեան Տէր-Յովհաննէսեան։ Ծնած է Շուշի (1 Դեկտ. 1854, Հ. Տ.)։ Նախնական կրթութիւնն ստացաւ սոյն քաղաքին թեմական դպրոցին մէջ, ուր հայերէնի հետ ուսաւ նաև գաղղիերէն լեզուն։ Հազիւ ուսման ընթացքն աւարտած (1874)՝ սկսաւ ժամանակին անուն ունեցող լրագրաց մէջ գրիչ շարժել։ Գրականութեան կոչում ունենալով հանդերձ՝ ամբողջապէս նոյնին նուիրուիլ չկրցաւ. իւր նեղ կացութեան պատճառաւ, ստիպուած էր ուսուցչութեամբ զբաղիլ և ապա Թիֆլիսի մէջ վարել հաշուակալի պաշտօն Շուշեցի Միքայէլ Միրզայեանի

առևտրական խանութին մէջ։ Այս պաշտօնին մէջ մնաց մինչև վերջին տարիները։ Քանի մը տարի յառաջ գնաց Բաթում, ուր կանչուած էր լաւ պաշտօնով մը. բայց յաչադկոտաց սպառնական նամակներէն ստիպուած և Աղէքսանդր Թարխանեանցի բախտին չվիճակելու համար, խոյս տուաւ և դարձաւ Թիֆլիս։ Այս արհաւիրքը ազդեց մեծապէս իւր ֆիզիքական կազմածքին վրայ, որուն հետևութեամբ քայքայեցաւ արդէն իսկ աննախանձելի մարմնական առողջութեան հետ մտաւոր կարողութիւնը, որոնց ճշնշման տակ ընդ միշտ ընկճեցաւ (30 Օգոստոս 1908, Հ. Տ.)։

Բազմաթիւ և բազմազգի են Մուրացանի գրութիւնները։ Դժբախտաբար կորսուած կը մնան ներկայ և ապագայ աշխարհի համար, եթէ տակաւին թող տրուին հոն՝ ուր են։ Վասն զի Մուրացանի երկասիրութիւնները հրատարակուած են ցրիւ պարբերական թերթերու մէջ, որ օրուան հետ կը ծնանին և կը մեռնին։ Հանգուցեալը մահուընէն չորս տարի յառաջ ինքնին ձեռնարկեց իւր ցիրուցան երկերը հաւաքել և ներքին բովանդակութեան համաձայն համադրելով՝ ի լոյս ընծայել հատորներու մէջ։ Այսու թէպէտ ժամանակագրական կարգը չէր պահուեր, բայց ասոր փոխարէն ընթերցողը միահաղոյն առջևը կ'ունենար այնպիսի նիւթեր, որ քիչ շատ իրարու հետ որոշ կապ ունէին և ամբողջութիւն մը կը կացուցանէին։ Մուրացանի գովելի ձեռնարկութեան սկիզբ եղաւ, բայց չպսակուեցաւ իւր կենդանութեան ատեն։ Նիւթական միջոցներու և քաջալերողներու պակասութեան պատճառաւ, յոկ Ա. հատորը հրապարակ ելաւ (1904) և առկախ մնաց ցայսօր։ Թերևս այս տարւոյ սկիզբները լոյս տեսնէ իւր երկասիրութեանց Բ. հատորը, զոր, ինչպէս արժ. Դիւտ ա. ք. Աղանեանց կը ծանուցանէ «Հայրենիք» թերթին մէջ (1908 թ. 15)։ Հեղինակին կամքին ու տրամադրութեան համաձայն՝ յիշեալ գիտնական քահանան արդէն անցեալ տարւոյ Յունիս 24-ին մամուլին յանձնած է։ Այս հատորին բովանդակութիւնը չի համապատասխաներ այն կարգին, զոր Մուրացան իւր երկասիրութեան Ա. հատորին մէջ սահմանած է։ Բ. հատորը պիտի կացուցանէր «Գէորգ Մարզպետունի» ընդարձակ վէպը, մինչ Աղանեանցի հրատարակութեան մէջ Բ. հատորը պիտի բաղկանայ (ըստ վերջին կամաց հեղինակին) «Պատասխան իմ քննադատներին», «Ռուզան» և «Անդրէաս Երեց» երկուքն ալ կերպարանափոխուած։ Այսպէս թէ այնպէս, էականն է վաղընդփոյթ աւարտումը Մուրացանի գրութեանց հրատարակութեան, որոնց պատկառելի շարքը պարծանաց պսակ պիտի ըլլան Հեղինակին, Հրատարակիչներուն և հայ Գրականութեան։

Կարելի չէ Մուրացանի երկասիրութեանց ամբողջութեան վրայ նոյն դատաստանը կտրել։ Գործքերէն ոմանք շատ անկատար են և գրեթէ անարժէք. բայց մեծաւ մասամբ ընտիր և շահեկան են։ Անշուշտ մարգարիտները արհամարհելու պէտք չկայ, ապակւոյ հետ խառնուած ըլլալնուն համար. վասն զի մեր անկատար աշխարհքին մէջ այնպէս է բնութեան կարգ, որ լաւին հետ գէշը, ցորենին հետ որոմը խառն ըլլայ։ Շատ խիստ և անարդար կը գտնենք այս պատճառաւ քննադատներէն ոմանց և յանուանէ Լէօի այն դատաստանը, զոր Մուրացանի նկատմամբ կտրած են։ Լէօ իւր «Ռուսահայ գրականութիւնը» գործին մէջ (տպ. Վենետիկ 1904, էջ 280—284) Մուրացանի վրայ խօսած ժամանակ՝ կարծես դիտմամբ լոկ այնպիսի գրուածքներն յիշատակած է, որ այնչափ յարգի չեն իբր գրական՝ ևս առաւել վիպական արտադրութիւն. բայց և ոչ խօսք ըրած է Հեղինակին նշանաւորագոյն գրուածքներուն վրայ, որպիսի են «Գէորգ Մարզպետունի» վէպը և «Ռուզան» ողբերգութիւնը։ Կարծենք այսօր Լէօ փոխած է Մուրացանի վրայ իւր դատաստանը։ Հոս յառաջ կը բերենք Մուրացանի գրութեանց ամբողջական ցուցակն ըստ իւր իսկ շարադրութեան։ Իւր երկասիրութեանց Ա. հատորին մէջ հրատարակուածներն են «Նոյի Ագռաւը», «Առաքեալը» և Խորհրդաւոր Միանձնուհի»։ «Գէորգ Մարզպետունի» (Բ. հատոր), «Վահան Գողթնացի», «Անդրէաս երէց» (Գ. Հ.). «Հայ բողոքականի ընտանիքը», «Իմ կաթոլիկ հարսնացուն», «Զրհաս է» (Դ. Հ.). «Հարուստը զուարճանում է», «Հասարակաց որդեգիրը», «Իմ հրջանկութիւնը», «Անպատճառ իշխանուհի», «Մթթէ վայել է» (Ե. Հ.). Յաջորդ հատորը մանր գրուածքներու շարք մըն է. «Հանելուկը լուծուեցաւ», «Հին ազգասիրի գաղտնիքը», «Պակների բողոքը», «Երեկ և այսօր», «Տիկին Փիրալեանի վիշտը», «Ինչո՞ւ իմ ստորագրութիւնը չընդունեցին», «Յատուկ թղթակիցը», «Խոջի վանքում», «Երկուսից ո՞րը», «Մարդը մտադիր, կինը կարգադիր», «Ցպահանջ» և «Գթութեան քոյրերը» (Զ. Հ.). «Լուսաւորութեան կետրոնը» Ա. և Բ. մասն (Է. Հ.) «Լուսաւորութեան կետրոնը» Գ. և Դ. մասն (Ը. Հ.). Թատերգութիւններ, Զափածոյ բանաստեղծութիւններ (մեծաւ մասամբ անտիպ՝ Թ. Հ.). «Իմ տեսած աշխարհ» (նոյնպէս անտիպ՝ Ժ. Հ.)։ Այսչափ բազմաթիւ գրուածքներով հանդերձ՝ Մուրացանի անունը ժողովրդականացած չէ։ Պատճառը լոկ այն չէ, որ իւր գրութիւնները պարբերական թերթերու մէջ անյայտ թաղուած կորսուած են։ Իւր անյայտ մնալուն մասամբ պատճառ դարձած է ինքնին իսկ իւր անհատական բնաւորութիւնը և ենթակայական ուղղու-

թեան լարուած տենչանքն ու ձգտումը և պաշտպանած միակողմանի գաղափարները։ Սակայն և այնպէս արդարացի չէր ըլլար այս կարգի գրութեանց համար Մուրացանին վիպագրի անունը գլանալ։ Այս անուան լիովին արժանի է միայն իւր «Գէորգ Մարզպետունի» գեղեցիկ վէպին համար, չյիշելու համար ուրիշ շատ յաջող վէպերը։

Իրաւամբ Գէորգ Մարզպետունի պատմական վէպը իւր գլուխ գործոցը կը համարուի (հրատ. «Արձագանքի» մէջ իբր թերթօն 1896, թ. 35 մինչև թ. 150, մէջընդմէջ ընդհատութեամբ)։ Լայն վրձինով և առնական աղդու կերպով կը գծէ իւր պատմական նկարին վրայ շրջանակի ծիրերը և յագեցուցիչ գոյներով զայն կը պատկերացընէ։ Ժամանակին (940—920) արհաւրալից, խիստ, դառն և արիւնալից պարագաներուն և հանգամանաց մէջ՝ կը տեսնենք, թէ վիպագրին ճարտար վրձինը չի մոռնար ստեղծել կնոջական զգայունութեան գողտրիկ ծաղիկներ, և դարուն պարզ մարդիկներուն փոքրիկ ու շարժող պատկերներ՝ անագորոյն տեսարաններէ յոգնած աչքը կը կաղդուրեն ու կը զուարթացընեն։ Քանի որ այդ կոշտ ու դառն ժամանակն ընտրած է հեղինակը, ստիպուած ալ է զայն իւր ամբողջ խստութեամբ ու անկիւններովը պարզել, և չի քաշուիր ներկայացընելու քստմնեցուցիչ դէպքերու հետ՝ կոշտ զգածումներ ու բացատրութիւններ։ Ներկայացուցած պատկերներէն շատերը չեն երևար հին վերարկուով ծածկուած, այլ այնպէս մը, իբր թէ ժամանակին մարդիկն այդպէս ըլլալու էին, որ խաղաղութիւնը անուամբ լոկ կը ճանչնային և իրենց կրից ու ձրից անարգել աճման ընդարձակ ասպարէզ ունէին։ Գործքին արժէքը առաւել ևս կը բարձրանայ, եթէ ի նկատի առնունք նաև այն մտադրութիւնը, զոր ունեցած է, պահել լեզուին միութիւնը և ներդաշնակութիւնը, տեղական ու յարմար գունաւորումը, նկարագիրներու ըստ բաւականի ճշգրիտ ու յաջող ստորագրութիւնը և տեղ տեղ հանճարեղ մտածումներ ու վճիռներ։ Դժբախտաբար չկան այնպիսի առաւելութիւններ ալ, որոնց գոյութեամբը ընթերցողին պատրանքը կատարեալ կ'ըլլար, որ ինքզինքը փոխադրուած կը զգար նկարագրուած դարուն մէջ. զ. օր. պակաս է քննական հետազօտութեանց արդիւնքը, որոնցմով անձանց ու տեղեաց պարագաները ճշդութեամբ որոշուած ու պարզուած ըլլային, բացակայ են հին արձանագրութեանց և դիւանական աղբիւրներու նիւթեր, հին սովորութեանց ընծայութիւններ կայն։ Սակայն ի հարկէ այս պակասը կը յիշենք առանց վիպագրին իբր յանցանքը կամ մեղադրանքը ցոյց տալ ուզելու։ Իւր կողմանէ աշխատած է վէպը բազմակողմանի առաւելութիւն-

ներով օժտելու և յարգի ու պատուական ընծայելու և մեծաւ մասամբ յաջողած ալ է։ Անկարելի է, որ ընթերցողին մտադրութենէն վրիպի Մուրացանի երևակայութեան յառաջ բերած արդիւնքներէն հետևեալը. Մուրացան իրը հնարագէտ վիպագիր, պատմական չոր ու ցամաք դէպքերը առհասարակ կ'արդիւնաւորէ իւր կողմէն հնարուած սկզբնապատճառներու այնպիսի հանճարեղ յղացումներով, որ ընթերցողէն հաւանութեան և հիացման արտայայտութիւն կը կորզեն։ «Դէորգ Մարզպետունիով» Մուրացան միով բանիւ խոր զգայնութիւն արտայայտող և հոգեխօսողէն ճարտար գունաւորեալ գծեր ու պատկերներ յառաջ բերող վիպագիր կը ներկայանայ մեզի։ Նիւթն ամբողջապէս յառաջ բերել մեր սահմանէն դուրս կը համարինք, զայս ընել կը թողունք հայ մատենագրութեան և գրականութեան պատմութիւնը գրողներուն։

Մեծագոյն համբաւ կ'ունենար Մուրացան իբրև թատերագիր, եթէ ինքզինքը ամբողջապէս այն արուեստին նուիրէր։ Միայն մէկ ողբերգութիւն ունինք իրմէ. բայց կերևայ թէ ուրիշ ալ գրած ըլլալու է. վասն զի իւր գրոց ցուցակին Թ. Հատորը պիտի բաղկանայ Թատերագրութիւններէ։ Իւր սքանչելի Ռուզան ողբերգութիւնը (հրատ. «Թատրոն» հանդէսին մէջ, 1900 Դեկտ. Թ. 1.) ամբողջապէս յուզիչ ողբերգական գրուագ մըն է հիանալի նկարագրութեամբ և արուեստով։ Թէպէտ զերծ չէ թերութենէ, սակայն վերջաւորութիւնը ամբողջովին ներդաշնակութիւնը կաւրէ. յանցանքը Հեղինակին չէ այլ հրատարակիչներուն և տպագրողներուն։ Վասն զի ըստ Մինաս Բերբերեանի գրածին (Նոր-Դար, 1901, Թ. 70), Ռուզան հայրենասէր օրիորդը Հեղինակին ձեռագրին համաձայն, ինքզինքը թունաւորած է, որուն ակնարկութիւններն արդէն ողբերգութեան ընթացքին մէջ չեն պակսիր, մինչ տպագրուածին մէջ օրիորդը կը ներկայացուի լոկ անձնամատոյց եղած։ Այս պատճառաւ զուր են ընդդէմ Մուրացանի յարուած խծբծանքները, իբր թէ հայ կնոջ աւանդական անյողդողդ բարոյականին չի համապատասխաներ իւր նկարագրած Ռուզանը։

Հ. Հ. Հ.

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՊՕԷԶԻԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Իւրիյ Վեսելովսկու [1])

1.

Ժամանակակից հայկական բանաստեղծութեան նշանաւոր եղանակները պարզել, հանել նշանաւոր գումարներ, բանաձևերի մէջ դնել այն մտքերը, հայեացքները, ցանկութիւնները, որոնք ցոլանում են առանձին բանաստեղծների ստեղծագործութիւնների մէջ,—ահա մի խնդիր, որ մինչև այժմ չի լրացուած, թէև գոյութիւն են ունեցել հայկական բանաստեղծութեան նորագոյն շրջանին նուիրուած քննական ուսումնասիրութիւններ, ի դիմաց նրա գլխաւոր ներկայացուցիչների։ Այն ինչ նման աշխատութեան ժամանակը հասել է, հէնց նրա համար, որ նոր շրջանի առաջին բանաստեղծների գրական ասպարէզ իջնելուց արդէն անցել է աւելի քան 15 տարի և հետևաբար որոշ ինքնուրոյնութիւն է ստացել... Աչքի անցնելով առանձին բանաստեղծների երկերը, մենք շատ յաճախ կարող ենք նկատել նման եղանակներ և բնաբաններ, երբեմն իսկ արտայայտուած միևնոյն ձևով։ Այսօրինակ նմանութեան եթէ մենք պատահենք միայն երկու բանաստեղծների մօտ, դա համեմատաբար կունենայ քիչ նշանակութիւն. բայց երբ չորս-հինգ հեղինակներ միևնոյն եղանակը կրկնում են, այդ, բնականաբար, ծգում է խորհրդածութիւնների մէջ...

Բանն այստեղ նրանում չէ բոլորովին, թէ ով է ումից վերցրել, ով է ում նմանել. այս հարցի խոր ուսումնասիրութիւ-

---

[1]) «Бак. Изв.»

նը կը լիներ իզուր և անհետևանք աշխատութիւն։ Շատ յաճախ բանաստեղծներից ոչ մէկը չի հետևել իւր գրչի եղբօրը, այլ դէպքում բոլորը ընդօրինակել են ռուս կամ արևմտեան Եւրոպացի հեղինակին, կամ նոր ներդաշնակութեամբ պարզաբանել են այն եղանակները, որ ներդաշնակել են առաջին սերընդի հայ բանաստեղծները. վերջապէս եղել են այնպիսի դէպքեր, երբ ոչ մի ընդօրինակութեան մասին խօսք լինել չէ կարող, և նոր շրջանի զանազան բանաստեղծներ ուղղակի արտայայտել են մտքեր, կասկածներ, յոյսեր իրանց սեփհական դրդումով, որ կրում էին օդի մէջ, որ բոլորին մօտ և հասկանալի էր։

Բանաձևի մէջ դնել բոլոր, առանց բացառութեան, հայկական նոր բանաստեղծութեան եղանակները, անկարելի է լրագրական յօդուածի շրջանակում,—ես այդ ի նկատի էլ չունեմ։ Ես ցանկանում եմ վերցնել միայն մի քանի օրինակներ, զանազան բանաստեղծների (Յովհաննիսեան, Թումանեան, Մատուրեան, Լեռնց, Մանուէլեան) երկերից, անել յայտնի համադրութիւններ, ամեն մի առանձին դէպքում հանել գումարներ։ Թող սա լինի միայն աշխատութեան սկիզբը, առաջին փորձը, բոլոր նոր հայկական բանաստեղծութեան քննական հետազօտութեան մի յայտնի բաժինը, նրա բոլոր եղանակներով։ Եթէ այս յօդուածը պատճառ կը դառնայ ուրիշ ուսումնասիրութիւնների երևալուն, որոնք կը խօսեն հայկական բանաստեղծութեան գաղափարական բովանդակութեան և գեղարուեստական արժանաւորութիւնների մասին, ես իմ նպատակին հասած կը լինեմ։

Ժամանակակից հայ բանաստեղծներից մի քանիսը ունեն ոտանաւորներ, որոնց մէջ փառաբանում են մեծահոգի, ազնիւ գործչին, որ ամեն ինչ զոհում է իւր շրջապատողների օգտին, անշահասիրութեամբ աշխատում է մարդկանց համար, երբեմն մեռնում է, ինչպէս զինուորը իւր պահակում, շարունակելով մինչև վերջին շունչ աշխատել և բարին քարոզել։ Ահա թէ ինչ ենք կարդում Յովհաննիսեանի մի ոտանաւորում.

Երբ նա դեռ նոր էր լոյս աշխարհ տեսել,—
Դառն աշխատութեան կարիքի զաւակ—
Աւանդ ըստացաւ սիրել և գործել,
Ճակատին ծանր խաչի նշանակ։

Աներկբայ մտքով, հաւատող հոգով,
Քարոզում էր իւր խաչի քաղցրութիւն,
Ինչպէս խարազան երկաթի խօսքով
Նա հալածում էր շահ ու բռնութիւն։

Բանաստեղծը խօսում է այն հալածանքների մասին, որոնց հանդիպել է իւր ճանապարհին ճշմարտութեան և մարդասիրութեան այդ մունետիկը—մարդկանց կողմից, որ խոնարհւում են միայն ոյժի առաջ, եսականութեամբ և դաժանութեամբ են լցուած։

Եւ հաւատարիմ իւր կոչման մեռաւ,
Սուրբ ճշմարտութեան անբիծ նահատակ,
Իսկ սիրոյ նշանն անմահ դրօշմուեցաւ
Շատերի սրտում մէկի փոխանակ...

կարդում ենք այդ ոտանաւորի վերջին տան մէջ։

Լեռենցը «Նրանց ճակատագիրը» ոտանաւորի մէջ խօսում է երկու փոխադարձ սիրոյ կապերով կապուած յափշտակուածների մասին, որ դրա հետ միասին ոգևորուած են մի և նոյն ցանկութեամբ—աշխատել յօգուտ տանջուող, պաշտպանութեան և մխիթարութեան սպասող եղբայրների։ Նրանք մեռնում են ճնշուած և լքուած կեանքով, այն ժամանակ, երբ շատ բան կարող էին անել իրանց մօտիկների համար,

Մարդիկ էլ յիշում էին անբաժան
Նրանց անուն ու գործ և կեանքը դաժան.

Եթէ մենք դառնանք Մատուրեանի ստեղծագործութիւններին, կրգտնենք նրա «Տապանագիր» ոտանաւորը, որ դարձեալ բարձրացնում է անշահասէր, զաղափարական և մարդասէր գործչին։

Կանգնիր, ով անցորդ
Դու այս շերմի մօտ
Եւ հանգիստ կարդա քաջ նահատակին,
Որ կռուի դաշտում
Սուր ու զէնք ձեռքում,
Զոհ բերեց կեանքը իւր ազգի փառքին։
Բայց կարեկցութեան
Ո՛չ լաց, ոչ կական
Թող չպղտորեն քո սիրտն ու հոգին.
Նա լալ չէ սիրում,

Կռուել փոթորկում
Նահատակն ընկաւ ժպիտը դէմքին...

Պատկանեանից և մասամբ Շահ-Ազիզեանից սկսած, հայկական բանաստեղծութեան մէջ շատ դորժածական է դարձել բանաստեղծի թափառումների արտայատութիւնը, այս կամ այն պատմական յիշողութիւնների հետ կապուած, անցեալի փլատակներով և աւերակներով լցուած վայրերում։ Այսպիսի երկերի դասական օրինակ կարող է համարուել Ռ. Պատկանեանի «Արաքսի Արտասուքը»—մի սաստիկ ուժեղ գործ, որն այժմ էլ, յիսուն տարուց յետոյ, ցնցող տպաւորութիւն է թողնում և վկայում է այն անհերքելի ծիրը, որ ցոյց է տուել բանաստեղծը իւր գրական գործունէութեան սկիզբներում։ Պատկանեանի շաւղով են ընթացել նրա շատ հետևողները, նրա նման նկարագրելով իրանց միայնակ թափառումները պատմական արժանայիշատակ վայրերում, անցեալի մասին յիշողութիւնները, նախորդների հերոսութեան մասին մտքեր, ներկայիս անկատարելութիւնից առաջացած տրտունջներ։ Երբեմն բուն թափառումների մասին չի յիշուում, բայց հեղինակը ստիպուում է մի որ և է հին դեպի արտայայտել թախիծ, դառնալ դէպի մարդիկ կշտամբիչ կամ յորդորիչ խօսքերով։ Պատկանեանի համար այդ արել է Արաքսը—Յովհաննիսեանի «Տղմուտ» ոտանաւորի մէջ նոյն դերն է կատարում մի գետ, որ կտրում է Աւարայրի դաշտը, որի վրայ 451-ին հայերը հերոսաբար կռուել են պարսիկների դէմ քրիստոնէական կրօնի և իրանց հայրենիքի պաշտպանութեան համար։ Բանաստեղծին պատկերանում է. որ դիշեր ժամանակ, երբ ամեն ինչ ընկղմուում է քնի մէջ, Տղմուտը հեծեծում է, հառաչում է, ծածկուում է փրփուրով, յիշում է անցեալ դարերի, փառաւոր Վարդանի ժամանակի և նրա մարտակիցների մասին, փնտրում է իւր մտքերի և ողբի արձագանքը և չգտնելով այն, իրան սև վշտին է յանձնում։

Լեռնցը ունի «գիշերային երևոյթ» բանաստեղծութիւնը (Վարդանանց տօնի առիթով), որի մէջ պատմած է թ.նչպէս երբ՝

Հազիւ թէ գիշերը իւր մութ քօղն է սրփոում՝
Երկինքը թաղուում է խաւար ամպերում,
Աւարայրի դաշտի վրայ երևում է Վարդան Մամիկոնեա-

նի ուրուականը, որ թողել է իւր դերեզմանը, որ դառնայ նոր սերնդին, Յովհաննիսեանցի բանաստեղծութեան մէջ, Տղմուտի տրտունջները յիշեցնող խօսքերով։

Բայց լուռ են մարդիկը—չըկայ արձագանք,
Այլ հողմն է ողբում լոկ, որոտն է անկանգ
Եւ վեր՝ մութ երկինքը քաջին է լսում
Եւ նրա հետ լալիս է թըշուառ ու տրտում։

Կարդում ենք վերջին տներից մէկում։ Մանուէլեանն էլ դրա նման իւր «Անիի աւերակները» ոտանաւորի մէջ նկարագրում է անցեալի հոյակապ աւերակների մասին ունեցած մտքերն և զգացմունքները, տալիս է նոյնպէս Ախուրեան գետի տխուր մտքերը։

2.

Ժամանակակից հայկական աւելի տարածուած և սիրուած եղանակներից մէկն է դիմում ներշնչուած բանաստեղծ—մարդարէին և մտրտիկին, որ իւր կարող, ոգևորութեամբ լցուած, «մտրտիկանց սրտերը վառելու» ընդունակ երգերով, կարող է հասարակութեան մէջ զարթեցնել կայտառութիւն և եռանդ, հաւատ ներշնչել մարդկանց, ծգտում դէպի լաւ ապագան, յիշեցնել նրանց եղբայրական սիրոյ, մարդասիրութեան, անշահասիրութեան բարձր գաղափարները, որ շատ յաճախ մոռացուում են առօրեայ կեանքի ժխորի մէջ, անպատկառ եսականութեան և խստութեան աշխարհում։ Այս դէպքում, անկասկած, մի աւելորդ անգամ պէտք է նկատել Նաղսօնի ազդեցութիւնը, որի պօէզիային շնդհանրապէս շատ բան են պարտական հայ բանաստեղծները։ Յիշեցէք, ինչպէս Նաղսօնը, քանի մօտենում էր մահուան, աւելի և աւելի յաճախ արտայայտում էր այն յոյսը, որ հզօր—մարգարէ—ներշնչողը մարդկանց նոր խօսք կասի, կրգինուի փոքրոգութեան և քնի դէմ, իւր ոգևորութեամբ կամրապնդի տանջուողներին և լքուածներին... «Թող խաբեբայ, բայց հաւատացող մարգարէն մեզ երգերով դղրդացնի», «Ո՞ւր ես դու առաջնորդ և մարգարէ... Օ, է՛կ և թօթափիր այս փղձուկի և քնի ծանրութիւնը»։ «Ժամանակ է, երևացի՛ր, մարգարէ՛, արտմութեան ամբողջ ոյժով,

սիրոյ ամբողջ ոյժով աղաղակում եմ առ քեզ։ Նայի՛ր, ինչպէս զառամել ենք մենք, նայի՛ր, ինչպէս յոգնել ենք, ինչպէս անօգնական ենք տանջող կռուի մէջ»...

Այս նաղսօնական եղանակը, երբեմն քիչ թուլացած և ձևափոխուած, մշակուում է ժամանակակից հայ բանաստեղծների շատ ստեղծագործութիւնների մէջ, ինչպէս Յովհաննիսեանի, Թաւուբեանի, Թումանեանի և այլոց։ Նրանք բոլորը դիմում են մի ինչ որ երևակայական, դաղափարական բանաստեղծի կամ երգչի, նրանից կարող երգեր, նորոգութեան և կատարելութեան կոչ լսելու յուսով։ Այսպէս Յովհաննիսեանը «Երգչին» բանաստեղծութեան մէջ, ցանկութիւն է յայտնում, որ այդ երգիչը

Թող զարթեցնէ համարձակ
Մեր քնէած զգացմունք։
Մենք չկամինք խ սրխափել
Խաւարի մէջ տգիտութեան։

Վառի՛ր դու մեր սրտերում
Հուրը ազնիւ կրքերի—
Երկրպագու ենք կանգնում
Ճշմարտութեան պատկերի։

Նոյն հեղինակի մի այլ բանաստեղծութեան մէջ—որ կրում է մի շատ բնորոշ մակագիր Եսայի մարգարէից—մենք գտնում ենք հեռաւեալ դիմումը մարդիկ բանաստեղծին.

Մի՛ թողիր, երգի՛չ, քնարըդ կախած
Որ նրան ժանգով տարիքը պատեն,
Ոսկի լարերին դու ոգևորուած
Զարկի՛ր մատներով, թող դարձեալ հնչեն։

Թող հնչեն նորից հին երգը անմահ
Եւ վառեն սիրով սրտերը մարդկան,
Թող նոքա նորից օրհնի՛ երգեն անմահ
Գործերը բարոյ և կարեկցութեան։

Ինչպէս չէ կարող ձմեռն արգելել
Գալուստը շքեղ ծաղկաբոյր գարնան,
Նոյնպէս ճշմարիտ խօսքը խափանել
Չէ կարող ձայնը անմիտ չարութեան։

«Աշուղ» բանաստեղծութեամբ Յովհաննիսեանը նման կոչով դիմում է ժողովրդական երգչին, որին յորդորում է ազգային նուագարանի ներդաշնակութեամբ երգել զմայլեցնող, ոգելից երգ,—դնել նրա մէջ այն բողոքը, որ զգում, բայց չեն կարողանում արտայայտել նրա եղբայրները։ Թող նրա երգը

լինի տխուր և մռայլ, նրա մէջ լու�են արտասուքներ,—այնուամենայնիւ նա կարող է ազդել մարդկանց վրայ իւր ճշմարտութեամբ, ստիպել նրանց ցնցուել, բացատրել նրանց պարտականութիւնը ճնշուածների վերաբերմամբ։

Բայէք Ծատուրեանի բանաստեղծութիւնների բ. հատորը և դուք կրգտնէք այնտեղ «Հայ երգչին» բանաստեղծութիւնը, որ դարձեալ արտայայտում է, ներշնչուած բանաստեղծի համար անհրաժեշտ, նոյն միտքը,

Երգիր, որ ազատ քնարիդ լարերով
Ցնցես թելերը թմրած սրտերի

որը ցոլանում է Յովհաննիսեանի ոտանաւորի մէջ։ Հեղինակն սկզբում ներկայացնում է տանջանքների, վհատութեան, փոքրոգութեան տխուր պատկեր, յոյսերի, երազների և համարձակ թռիչքների բացակայութիւն, և մինչև անգամ աւելի մեծ եռանդով, քան Յովհաննիսեանը կոչ է անում ժողովրդի բանաստեղծ ներշնչողին, որի ժամանակ երբեմն հնչում են զուտ նաղսօնական խաղեր.

Օ, երգիչ, երգիր մեզ հզօր երգեր,
Բոցավառ երգեր ոգևորութեան։
Երգիր մեզ անմահ, կորովի ձայնով
Փառք և յաղթանակ փայլուն գործերի,
Երգիր որ ազատ քնարիդ լարերով
Ցնցես թելերը թմրած սրտերի...
Եւգիր... թող քո երգն անկեղծ, ոգելից,
Որպէս ջերմ աղօթք հայրենասէրի,
Ցրուէ մռայլը վհատ սրտերից,
Բանայ մեզ աղբիւր ոսկի յոյսերի...
Թող քո ոգեշունչ, կարող երգերով
Ծովի պէս յուզուի հայրենի աշխարհ...

«Պօէտ» բանաստեղծութեան մէջ Ծատուրեանը մի քիչ ձևափոխելով պօէտ դաղափարը, վերցնելով նրանից մարգարէի մի քանի դծերը, որով նա ամբոխից անհամեմատ բարձր է կանգնած և իշխանաբար հպատակեցրել է իրան, որպէս զի նրան բարու, դեղեցկի և ճշմարտութեան ուղիով տանի,—այնուամենայնիւ պարզևում է նրան մխիթարիչի, տանջուողների բարեկամի առաքելութիւն, որ ընդունակ է կատարել հրաշքներ,

իրա մարդասիրութեամբ, կոչական երգով։ Նա կոչում է այդ պոէտին.

Պոէտ, դու հպարտ սէգ արծուի նման,
Բարձրից մի նայիլ տգէտ ամբոխին.
. . . . . .
Երգիր նրան հաց և արդար վաստակ։
Երգիր նորան լոյս, բարիքներ ուսման,
Եղիր ամբոխին ուսուցիչ—ընկեր.
Նստիր նրա հետ մի ճաշի սեղան,
Շոշափիր ժոտից դու նորա վէրքեր...
Ապրիր նորա հետ, նորա տանջանքով,
Մի զզուիր նրան ձեռքդ պարզելու.
Դու ոյժ ներշնչիր նորան քո երգով—
Խաւարի կապանքն անվախ փշրելու։

Համարեա նոյնպիսին գտնում ենք երրորդ ժամանակակից բանաստեղծ Լևոն Մանուէլեանի մօտ, որ կրում է «Պոէտ» վերնագիրը, որի մէջ գովում է ի վերուսա շնորհուած, ներշնչուած երգչին, որ անվեհերութեամբ և յուսով է լցուած, ձգտում է բարձր նպատակի, ընդունակ է մարդկանց քաջալերելու և մխիթարելու... Հեղինակը կոչում է այդ «երգիչ-մարդարէին» իւր երազներից ամբոխին մասն հանել, ցոյց տալ նրան նոր հորիզոններ... Քանի որ միաժամանակ մի քանի բանաստեղծներ նոյն դիմումներն են անում, նրանք ակամայ գրաւում են մեր ուշադրութիւնը և պէտք է միևնոյն կարգի մէջ մտցրուեն։

(Վերջը հետևեալ համարում)

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՆ

ՎԵՀ. ՄԱՏԹԷՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ

Նորընտիր Վեհ. Մատթէոսի կաթողիկոսական կոչման մէջ հաստատուելու մասին թէպէտև դեռ պաշտօնապէս Պ. Բուրգից լուր չկայ ոչ մամուլի մէջ, ոչ Էջմիածին, բայց տեղւոյս թերթերի հաղորդած տեղեկութիւնների համեմատ Կ. Պոլսի ռուսական դեսպանատունը ծանուցել է այդ մասին իրան Իզմիրլեան սրբազանին և վերջինս էլ հեռագրով շնորհակալութիւն արել Կայսեր։

Կ. Պոլսի թղթակիցները զանազան տեղեկութիւններ են հաղորդում, թէ հայ ժողովուրդը շնորհաւորանքներ է ուղղել Վեհին հաստատութեան առթիւ, թէ բժիշկները բարւոք են համարում յետաձգել մի քանի ամսով դէպի Կովկաս ուղևորութիւնը, թէ Ն. Ս. Էջմիածին գալուց առաջ Պ. Բուրգ կուղևորուի Ն. Մ. Գահոյից իր շնորհակալութիւնը յայտնելու հաստատութեան առթիւ, մինչև անգամ հաղորդում են թէ հետը ովքեր կուղեկցեն և այլն և այլն։

Զարմանալի է սակայն, թէ ինչպէս է, որ մինչև այժմ ոչ մի պաշտօնական հաղորդագրութիւն չկայ Էջմիածին, որը անկարող է լրագրական լուրերի համեմատ կարգադրութիւններ անել նորընտիր հայրապետի ընդունելութեան համար։

Մինչդեռ Պոլսահայ լրագիրներն աւետում են նոյն իսկ, որ «ս. Հայրապետը շուտով հայրապետական պատարագ պիտի մատուցանէ Կ. Պոլսոյ Մայր եկեղեցւոյն մէջ»։

ՍԻՑԻԼԻԱՅԻ ԱՂԷՏԸ

Բնութեան ամեն մի չնչին երևոյթ ներշնչում է մարդու պատկառանք որքան էլ ուսումնասիրած ու յայտնի լինի նա գիտութեան։ Մարդու համար, որ դեռ չի կարողացել թափանցել գոյութեան իմաստը, չգիտէ սկիզբն ու վերջը, որ մոլորւում է բնութեան ու կեանքի հաղարաւոր գաղտնիքների լաբիւրինթոսի մէջ, կարող ենք, առանց չափազանցութեան ասել, որ զարհուրելի են այն սոսկալի բնական աղէտները, որ երկրի գոյութեան շրջանում տեղի են ունենում նոյն իսկ երկրի վրայ։

Պոմպէյ, Անի, Մարտինիկ կղզի· այս պատմական անուններին աւելացաւ մի անուն ևս, Սիցիլիա կղզի, որ իւր աղէտի թարմութեամբ ու չափով մոայլեցնում է մարդու միտքը ու նուազեցնում նրա մեծութիւնը բնութեան մէջ։ Մարդը կրում է իւր վրայ բնութեան աղէտի հետևանքը, անզօր ու անօգնական հասկանալու այն աղէտի պատճառները, որը առաւ իւր գիրկը 150 հազարից աւելի մարդ ու աւելի մեծ քանակութեամբ մարդիկ թողեց թշուառ ու տառապալից դրութեան մէջ։

Միտքն ու զգացումը անկարող եղան մեղմացնել բնութիւնը, այնքան թշուառ է մարդը։

Գիշերուայ անթափանց մթութեան մէջ դղրդաց երկիրը, տեղաց ուժգին անձրև, ալեկոծուեց ծովը ու ալիքները փրփրալից բարձրացան երկինք։ Կապոյտ ջրերի սպիտակ փրփուրի մէջ թաղելով մի ամբողջ քաղաք։ Գետինը բացեց իւր ահռելի բերանը ու գերեզման դարձաւ մի ամբողջ քաղաքի, նրա անցեալով ու ներկայով...

Մտքի շնորհիւ երկրագնդի միջից իսկ ձեռք բերած վառուող նիւթը կլանեց այն ամենը, ինչ որ խնայել էին գետինն ու ալեկոծ ջրերը։

«Մօնտերբելլօ» նաւը փրկեց 500 մարդ· նրանք զարհուրած պատմում էին աղէտի մասին ու Դանտէի նկարագրած դժոխքը իւր գոյներով նսեմանում էր այդ պատմածի առաջ։

Մի երերում ևս ու բնութիւնը գրկեց նորից իւր անտարբեր սառնութիւնը։

Հանգստացաւ Սիցիլիա կղզին...

Լռեցին ծովի ալիքները, անձրևը դադարեց ողողել փլատակները...

Թրթռաց զուարթ լուսաբերը ու եկաւ սփոփելու թողած խաղաղ կեանքն ու մարդկային անդորրութիւնը։

Բայց իզո՞ւր...

Ծովի ջրերի վրայ լողացող թշուառ փլատակները դիմաւորեցին նրան, գեղածիծաղ Սիցիլիայի բնութեան ու ծովի, զուարթ աղջիկ ու տղայի փոխարէն։

Այլանդակուեցին եզրները, փոխուեց Մեսինի նեղուցը...

Կործանուած Սիցիլիան մարդկութեան համար մի նոր ապացոյց է թէ՝ որքան փոքր է մարդը բնութեան ոյժի առաջ. որքան խեղճ է նա ու անօգնական։ Եւ եթէ այդ այդպէս է, որ անհերքելի է, ուրեմն որպիսի ոչնչութիւն է մարդը իւր առօրեայ կեանքում...

ՅՕԲԵԼԵԱՆՆԵՐ

Վերջին ամիսները պտղաբեր եղան հայութեան համար մի քանի հայ գործիչների յօբելեաններով։ Համակրողները կատարեցին «Աղբիւր» մանկական ամսագրի 25 ամեայ գոյութեան յօբելեանը արքունի թատրոնում։ Ցիրաւի գնահատութեան արժանի է այդ մարմնացեալ եռանդի գործունէութիւնը հրատարակչական ասպարիզում և թերթիս խմբագրութիւնը իւր ժամանակին շնորհաւորեց յօբելեարին։—Բագուի հայ հասարակութիւնը տօնեց Բագուի հայ թատրոնի յիսնամեակը։ Իսկ այս օրերս նոյն Բագուն հանդիսաւոր կերպով տօնեց հայ նշանաւոր դերասանուհի տ. Սիրանոյշի 35 ամեայ բեմական բեղմնաւոր գործունէութիւնը։ Ժամանակակից և ականատես լինելով ութսունական թուականների հայ թատրոնի զարգացման և այն հիացմունքին ու յափշտակութեան, որով Թիֆլիսի հայ հասարակութիւնն ընդունեց Կ. Պոլսի հայ բեմի երկու սիւներ օր. օր. Աստղիկին և Սիրանոյշին, որ մի նոր յեղաշրջում առաջ բերեց ռուսահայ թատրոնի կեանքի մէջ, մենք վկայ եղանք, որ այդ երկու օրիորդները, տ. Հրաչեայի և Ադամեանի հետ միասին հիմք դրեցին ռուսահայ նոր թատրոնին և ստեղծեցին մի ամբողջ բեմական սերունդ։ Մեր շնորհաւորութիւնները մատուցանելով շնորհալի տիկնոջ՝ մաղթում ենք նորան առաւել գեղեցիկ ապագայ։

ԼՈՒՐԵՐ

Մենք խոստացել էինք «Լումայի» ներկայ համարում տալ մեր աշխատակից հանգ. Մուրացանի մասին մի տեսութիւն և նորա վերջին պատկերը։ «Հանդէս ամսօրեայի» մէջ կարդում ենք Հ. Հ. Հ.-ի մի յօդուած նորա մասին, որը կարող է ծառայել իբր անաչառ քննադատութիւն տաղանդաւոր վիպասանի մասին, ուստի և արտատպում ենք ներկայ համարում փոքրիկ յապաւումներով, տալով նաև նորա լուսատիպ պատկերը։

— Ամեն. Օրմանեան սրբազանը անցեալ դեկտ. 16-ին մի նոր ընդարձակ գիր է ուղղել վեհ. Իզմիրլեանին, իբրև Կ. Պոլսի Պատրիարքի, յայտնելով, որ ինքը պարբերաբար ազգային ժողովին է ուղարկել իւր 12 տարուայ բոլոր հաշիւները, գործերը, չէկերն ու դրամները և յայտնել է թէ «Պատրիարքարանի բոլոր գործերը վարչական ժողովներու խորհրդակցութեամբ և որոշմամբ,

համերաշխութեամբ և գործակցութեամբ կատարուեցան և... Չեզ կթողում իմաստասիրել և եզրակացնել, թէ ինչ բանէ առաջ եկած կրնայ ըլլալ, ձեռքի տակ եղող հաշիւները քննել չուզել, օրինաւոր համարատուութիւն մը ունենալ չուզել, ակնյայտնի և նիւթական եղելութիւն մը ճանչնալ չուզել և մտացածին կարծիքներու իրը ամբաստանութեանց կարևորութիւն տալ ուզել» (Բիւզանդիոն թ. 3721). և խնդրում է պէտք եղածը կարգադրել։

Կ. Պոլսի լրագիրներում կարդում ենք, որ Այնթապում գիտաւորութիւն կայ Կիլիկեան բարձրագոյն դպրոց բանալ, որի համար բաւականին խոշոր դրամագլուխ են կազմել. Կիլիկեցի ծանօթ գրագէտ Արմաշական Ներսէս վ. Դանիէլեանի յորդորանքով այդ գումարից 4000 օսմ. ոսկի (մօտ 40,000 ռուբլի) յանձնել են Պողոս Նուբար փաշային շահեցնելու և հետզհետէ աւելի խոշոր դրամագլուխ կազմելու այդ նպատակով։

Պետական Դումայում վերջերս մտցրած է Կովկասի մասին հարցաքնդում, որ շատ ամղկալից նիստեր առաջ բերեց այնտեղ և ուր Կովկասի փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի կողմից ուղարկած է բացատրութիւններ տալու բարոն Նոլդէն, որ վերջերս կարճ ժամանակով եկել էր Թիֆլիս իրերի դրութեան հետ մօտիկ ծանօթանալու համար։ Որովհետև հարցը դեռ անորոշ վիճակի մէջ է, հետևանքի մասին իւր ժամանակին մենք կտանք մանրամասն տեղեկութիւն։

Հայ գրականութիւնը այս օրերս հարստացաւ մի նոր հրատարակութեամբ. առանձին մեծ հատորով լոյս տեսաւ հին և յայտնի կրիտիկոս Դար. Ենգիբարեանի մատենախօսական գրուածների ժողովածուն, որ ցրուած էին Մշակում, Արձագանքում և Լումայում. եւ ինչպէս լսում ենք, այս օրերս մամուլին կյանձնուի նոյն հեղինակի մատենախօսական գրուածների երկրորդ հատորը։

«Հայրենիք» լրագիրը, որի երկրորդ տարուայ առաջին համարը լոյս տեսաւ յունուարի 1-ին և որը պիտի հրատարակուէր 1909 թուին իբրև յաւելուած «Լումայի», խմբագրութիւնից անկախ պատճառներով միաժամանակ դադարում է մինչև բարեյաջող հանգամանքները։

Վերջերս Թիֆլիսում ձերբակալուեցան մի խումբ հայ գրական գործիչներ և ինտելիգենցիայի անդամներ։

Բեթլիսի հայերը մի համախօսական հեռագրով յայտնել են Գոլիս, որ այնտեղ բանտարկուած են մի քանի դաշնակցականներ։ Ներքին գործոց նախարարն այդ մասին հեռագրով բացատրութիւններ է ուզել Բիթլիսի կուսակալութիւնից։

«Միտք» լրագրի երկու համար լոյս տեսնելուց յետոյ՝

նորա խմբագիր պ. Արշակ Եդիգարը հիւանդանալով՝ ստիպուած եղաւ առժամանակ դադարեցնել թերթը։

Լոյս է տեսել «Գիւղատնտես» անունով մի նոր շաբաթաթերթ, որի հրատարակութեան որոշ չափով դրամական նպաստներ են տուել Կովկասեան գիւղատեսական ընկերութիւնը և մի քանի հայ հաստատութիւններ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ.—«Լումայի» ներկայ համարում մենք տպում ենք այն լրագիրների յայտարարութիւնները միայն, որոնք տպել են «Լումայի» յայտարարութիւնը։

«Բազմավէպ»-ի խմբագրութեան.—Մենք մի անգամ էլ խնդրում ենք Ձեզ ուղարկել խմբագրութեանս հանգ. Մուրացանի ընդարձակ յօդուածը, որ ինքը հեղինակը մեր միջոցով պահանջել էր Ձեզանից, բայց որ մինչև այժմ չհաճեցաք հասցնել մեզ և ոչ իսկ պատասխանել։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Անձեռնհաս գտնուելով առանձին առանձին պատասխանել ամսոյս 27-ին՝ անուանակոչութեանս տարեդարձի առիթով, հեռագրով և նամակով ինձ շնորհաւորութիւն և բարեմաղթութիւն ուղղող գերապատիւ սրբազան եպիսկոպոսներին, բարեշնորհ վարդապետներին, բարեկրօն քահանաներին և յարգելի քաղաքացիներին՝ խնդրում եմ Ձեր բարեհաճ թոյլտուութիւնը» «Լումայ»-ի միջոցով յայտնել նրանց ամէնքին սրտագին գոհունակութիւնս, մաղթելով յԱստուծոյ բոլորի համար յաջողութիւն, անտրտում ուրախութիւն, կատարեալ առողջութիւն, երկնաւոր և երկրաւոր ամենակերպ մխիթարութիւն։

ՍՈՒՔԻԱՍ ԱՐՔԵՊ. ՊԱՐՍԵՂԱՆՑ

29 Յունուարի 1909 ամի
սուրբ Էջմիածին.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ալէքս.—Ատրպետին. Ձեր նոր յօդուածի մասին Ձեզ նամակ կգրենք։

Սալիան. բժ. Մ. Արամեանցին. Շնորհակալութիւն Ձեր համակրական նամակի համար։ Ձեր առաջարկութեան նամակով կպատասխանենք։ Գրքերը ստացել ենք։

Էջմիածին.—Յար. Պետրոսեան. Բանաստեղծութիւնները ստացել ենք. շնորհակալ ենք Ձեր բարեմաղթութիւնների համար։

Վաղարշապատ. Մ. Բ, Շարունակեցէք։ Շնորհակալութիւն։

—Ծոյլին. Ի՞նչ էք լռել։

Ն. Նախիջևան. Ե. Շահազիզին. Ձեր յօդուածի շարունակութիւնը կտպուի հետևեալ համարում։

Կ. Պոլիս. Քննպգատին—Խնդրում ենք ուղարկել Ձեր յօդուածների շարունակութիւնը։ Նամակ կգրենք։

Բագու. Գ. Ե.—Ուղարկեցէք խոստացած յօդուածը։

Ն. Բայազիտ. Խանդագէ. Ձեր վէպը կտպենք հետևեալ համարից։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Գար. Ենգիբարեանց. Մատենախօսութիւն. Թիֆլիս 1909 1 ռ. 25 կ.
Ղազար Փարպեցի. Ղուկասեան մատենադարանի հրատ. 1909 30 կ.
Գրական-դիտական ժողովածու. խմբ. Ե. Թօփչեան. հրատ. տիկ. Զ. Մեհրաբեան. Թիֆլիս 1909 1 ռ. 50 կ.
Յովհ. Թումանեան. Անբախտ վաճառականներ. Թիֆլիս. 1909 թ. 35 կոպ.
— Շունն ու կատուն. 25 կ.
— Ուլիկը. 15 կ.
— Անյաղթ աքլորը. 15 կ.
— Ծիտը. 15 կ.
— Աղուէսը. 15 կ.
Օրացոյց. Երուսաղէմի տիպ. 1909.

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բացուած է 1909 թ. բաժանորդագրութիւնը
(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՀԱՍԿԵՐ

մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով

Մշտական աշխատակցութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԵՒ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Ամսագիրը ունի նաև ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ուր շօշափւում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևորագոյն հարցեր։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՀԱՆԱՊԱՐՀԱՆԱԽՍՈՎ.

Տարեկան ՀԱՍԿԵՐ, մանկ. բաժին	3 ռ.	մանկավարժ. բաժ. 4 ռ.
Կէս տարուանը	1 ռ. 80 կ.	2 ռ. 10 կ.
Մէկ ամսուանը	— 30 կ.	— 35 կ.
Պարսկաստանում	3 ռ. 50 կ.	4 ռ. 50 կ.
Արտասահմանում տարեկան	ԻՆԸ ֆր.	ՏԱՍՆԵՐԿՈՒ ֆ կ.
Հրատարակութեան սկզբից մինչև 1909 թ. վերջը	11 ռ.	15 ռ.

Խմբագրատան հասցէն՝ Թիֆլիս, Բեհբութեան փող. 25 (Тифлисъ, Редакція журнала «Аскеръ» Tiflis (Caucase) Rédaction du journ. «Hasker».

Խմբագիր-Հրատարակիչ՝ Կատ. Լիսիցեան

БАКУ

ЕЖЕДНЕВНАЯ ОБЩЕСТВЕННАЯ-ЛИТЕРАТУРНАЯ, ПОЛИТИЧЕСКАЯ ГАЗЕТА

Подписная цѣна газ. «Баку»

Съ доставкой въ Баку на годъ 7 р., 11 мѣс. 6 р. 50 к., 10 м. 6 р., 9 м. 5 р. 50 к. 8 м. 5 р., 7 м. 4 р. 50 к., 6 м. 4 р., 5 м. 3 р. 50 к., 4 м. 3 р., 3 м. 2 р. 50 к., 2 м, 1 р. 50 к., 1 м. 1 р.

Съ пересылкой въ другіе города: на годъ 8 р. 50 к., 11 м. 7 р. 50 к., 10 м. 7 р., 9 м.. 6 р. 50 к., 8 м. 6 р., 7 м., 5 р. 50 к., 6 м. 5 р., 5 м. 4 р. 50 к., 4 м. 4 р., 3 м. 3 р., 2 м. 2 р. 50 к., 1 м. 1 р. 50 к.

За границу: на годъ 15 руб. на полгода 8 руб.

Подписываться можно на всѣ сроки, но не иначе какъ съ перваго числа каждаго мѣсяца. За перемѣну адреса просятъ выслать пять семикопѣечныхъ марокъ.

Отдѣльные номера газ. «Бакинское Эхо» продаются въ конторѣ газеты и у разносчиковъ по 5 к.

Плата за объявленія: для мѣстныхъ—впереди текста за строку петита или занимаемое ею мѣсто 20 к., позади текста—15 к. Для иногороднихъ—впереди текста—25 к., позади текста—20 к. за строку петита. Многократныя объявленія—по соглашенію съ конторой. Объявленія отъ лицъ, ищущихъ труда, печатаются за половину платы.

Подписка и объявленія принимаются въ конторѣ редакціи ежедневно, кромѣ праздниковъ, отъ 10 до 8 час. дня безпрерывно.

Адресъ редакціи: Баку, Молоканская ул. гостиница «Кавказъ», телеф. № 518.

Отдѣленіе редакціи—Барятинская, гост. «Пассаж», отъ 9 ч. утра до 3 ч. вечера.

ԶԱՆԳ

Գրական, հասարակական, տնտեսական, գեղարուեստական շաբաթաթերթ

Բազայ Հ. Կուլտուրական միութեան օրգան

Բաժանորդագինն է, տարեկան 6 ռ., Հատը 10 կ.։

Баку, Редакція «ЗАНГЪ»

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

Գրական, գեղարուեստական, երաժշտական

10 գիրք 10—ռ., 6 գիրք—8 ռ., 4 գիրք—5 ռ., մէկ գիրք—2 ռ.

Тифлисъ, Редакція «Гехарвестъ»

Tiflis (Caucase) rédaction «Kegharvest».

Խմբ.-հրատ. Գար. Լեւոնեան

Продолжается подписка

на 1909 г.

На большую ежедневную политическую, общественную и литературную ГАЗЕТУ

„Новая Русь"

Издается при ближайшемъ участіи А. А. Суворина и постоянныхъ сотрудниковъ «Руси».

Подписная цѣна

Съ дост. и пер. На годъ 12 р., на 6 м. 7 р., на 1 м. 1 р. 30 к.: Безъ доставки 10 р., на 6 м. 5 р. 50 к., на 1 м. 1 р.: За границу 20 р. на 6 м. 11 р. на 1 м. 2 р:

Подписка принимается только съ 1 числа каждаго мѣсяца и не долѣе конца года,

При подпискѣ съ 1 января на годъ допускаетея разсрочка: при подпискѣ—5 руб. въ апрѣлѣ—4 р. и въ іюлѣ—3 р. При желаніи подписаться въ разсрочку—необходимо обязательно указыватъ каждый разъ на переводѣ о томъ, что это взносъ въ разсрочку, и переводить только упомянутую сумму.

При подпискѣ на срокъ менѣе года разсрочка не допускается.

Подписная цѣна для г.г. студентовъ, сельскихъ учителей, духовенства, сельскихъ фельдшеровъ на годъ—9 руб., а помѣсячно—90 коп., разсрочка же допускается только съ 1 января на годъ: при подпискѣ —4 р., въ апрѣлѣ—3 р. и въ іюлѣ—2 р.

Издатель *Г. М. Михинъ* Редакторъ *И. К. Заіончковскій*

Продолжается подписка до конца 1909 года

На газету

„Тифлисскій Листокъ"

ПОДПИСНАЯ ЦѢНА

Съ 1-го февраля до конца года.

Съ доставкой въ Тифлисѣ . . . . . 4 р. 75 к.

Съ пересылкой для иногородныхъ . . . . . 6 р. 50 к.

Подписка принимается: на любой срокъ но только съ 1 числа каждаго мѣсяца, исключительно въ конторѣ изданія, Головинскій проспектъ. № 15.

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ

Բաժանորդագին երկուսը միասին պրեմի աներով տարեկան 10 ր.

Հասցէն՝ Тифлисъ, Ред. журналъ «Агбюр-Таразъ», Tiflis, red. «Agbur-Taraz».

ԱՐԱՐԱՏ

Ամսագիր.

Բաժանորդագինը 4 ր.

Հասցէն՝ Редакція «Араратъ» Вагаршапатъ.

ԼՈՒՄԱՅ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ 14 ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1909 թուին Լումաեն լոյս կտեսնի իւր նախկին դիրքով ամեն ամսի 20-ից յետոյ, բաղկացած 48—80 երեսներից։ Ինչպէս միշտ, հարկաւոր դէպքերում, կտրուեն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Նիւթերը պիտի գրուած լինին պարզ, մի էջի վրայ և ոչ աւելի քան 32 տպ. երես։
2. Արտատպութիւն ոչ մի դէպքում չի տրուում։
3. Նիւթերը չեն վերադարձնուում. յետ ստանալ ցանկացողները պիտի ուղարկեն փոստի ծախք։
4. Զտպուող նիւթերի մասին ծանուցում է տրուում ամսագրի մէջ պատասխանների լաժնում։
5. Թարգմանական նիւթեր ընդունուում են շատ կարճ և ընտիր հեղինակների։

ԲԱԺՆԷԳԻՆՆ է տարեկան 6 ռ., *կէս տ.* 4 ռ.,
Արտասահման „ 8 „ „ 5 „

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻ ՉԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizeiskaja, 7.

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի

Գ. Գալստեանի Հրատ.

Հ. ԲՕԿԼ

ԱՆԳԼԻԱՅԻ

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Թարգմ. ՎԱՐԴԳԷՍ ԱՂԱՆԵԱՆՑ